ՎԵՐԱՍԱՀՄԱՆԵԼՈՎ ԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ, ՄԱՐՏԱՇՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սեռական Բռնության Ճգնաժամային Կենտրոն

«ՎԵՐԱՍԱՀՄԱՆԵԼՈՎ ԱՌՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ» վերտառությամբ հետազոտությունն իրականացվել է Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնի կողմից:

Հետազոտության հեղինակը՝ Զարուհի Ազնաուրյան

Այս նյութը պատրաստվել է «Վերասահմանում. Գենդերային փոխակերպման աշխատանք տղամարդկանց հետ Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում» / “REDEFINE – gender transformative work with men in Eastern Europe and South Caucasus” 5-ամյա ծրագրի շրջանակում, որի նպատակն է ներգրավել տղամարդկանց և տղաներին հանուն գենդերային հավասարության և ընդդեմ բռնության աշխատանքներում Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի տարածաշրջաններում: “REDEFINE”-ը իրականացվում է շվեդական MÄN քաղաքացիական հասարակության կազմակերպության կողմից՝ համագործակցելով Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Բելառուսի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Ծրագիրը ֆինանսավորվում է Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (Sida) կողմից: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է ստեղծողը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՆԴՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ 6

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 14

Հետազոտության նպատակը 15

Մոտեցումը և տվյալների հավաքագրումը 15

Էթիկական նկատառումներ 17

Հետազոտության սահմանափակումները 17

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 18

Տղամարդկանց վերագրվող դերերը և ակնկալիքները 19

Գենդերային հիմքով անհավասարությունը, խտրականությունը և մարտահրավերները 23

Խնդիրների լուծման և հաղթահարման մեխանիզմներ 27

Առողջական խնդիրներ 30

Լավ հոր մասին ընկալումները 33

Անհրաժեշտ անցումներ և փոփոխություններ 38

Վեբկայքեր տղամարդկանց համար 40

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 44

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 47

ԽՆԴՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

ԽՆԴՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

Ակնկալիքներ և վերագրվող դերեր. Ուսումնասիրությունների արդյունքները հետևողականորեն ցույց են տալիս, որ հասարակության ակնկալիքները և վերագրվող դերերը էական ազդեցություն ունեն տղամարդկանց ընկալումների, վարքագծի և ընդհանուր բարեկեցության վրա: Հաճախ տղամարդկանցից ակնկալվում է լինել ընտանիքի կերակրողը, ինչն էլ առաջացնում է կարիերայում հաջողության հասնելու և ֆինանսական կայունություն ապահովելու ձգտման հետ կապված սթրես[1]: Առնականությունը բնութագրող ավանդական նորմերը չեն խրախուսում հույզերն արտահայտելը և խոցելիություններ ունենալը, ինչի արդյունքում էլ տղամարդիկ զսպում են իրենց զգացմունքները: Այս հանգամանքն էլ իր հերթին ազդում է հոգեկան առողջության և հարաբերությունների վրա: Բացի այդ, հասարակական արժեքները հակված են փառաբանել տղամարդկանց ֆիզիկական ուժը և ռիսկի դիմելը՝ խթանելով մի մշակույթ, որտեղ խոցելիությունը ապախրախուսվում է[2]: Այս ակնկալիքներն ու դերերը զգալիորեն տարբերվում են՝ կախված մշակութային, էթնիկ պատկանելությունից և սոցիալ-տնտեսական միջավայրից:

Հոգեկան առողջություն. Ինչպես ցույց են տալիս տարբեր ուսումնասիրություններ, կան առնականության տարբեր ընկալումներ, որոնք կարող են տարբեր կերպ ազդել տղամարդկանց պատկերացումների և բարեկեցության վրա: Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ առնականության ավանդական նորմերը հաճախ շեշտադրում են ստոիցիզմը, ինքդ քեզ ապավինելը և զգացմունքները զսպելը, ինչն ազդեցություն է ունենում տղամարդկանց՝ օգնություն փնտրելու կամ խոցելիությունները քննարկելու պատրաստակամության վրա[3]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առնականությանը վերաբերող քարացած նորմերին հավատարիմ մնալը կարող է հանգեցնել սթրեսի, սահմանափակված հուզական արտահայտման և լարված հարաբերությունների[4]: Հետազոտություններն ընդգծում են տղամարդկանց հոգեկան առողջության հետ կապված խարանի առկայությունը, ինչը հանգեցնում է հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ թերի տեղեկությունների և թերապիայի կամ աջակցության դիմելու դժկամության: Առնականությանը վերաբերող ավանդական նորմերը հաճախ ետ են կանգնեցնում հոգեկան առողջության հարցերով զբաղվելու մտքից, քանի որ դա ընկալվում է որպես թույլ կամ անհաջողակ լինելու նշան: Հաջողության, կարիերայի և կերակրողի դերի հետ կապված հասարակության ակնկալիքները զգալիորեն ազդում են տղամարդկանց ընկալումների վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ առնականության իդեալներին համապատասխանելու հասարակական ճնշումը կարող է առաջացնել հոգեկան առողջության խնդիրներ և խաթարել էմոցիոնալ բարեկեցությանը: Տղամարդն ավելի մեծ դժկամությամբ է դիմում հոգեկան առողջության հետ կապված աջակցության՝ համարելով դա որպես նվազ տղամարդկային արարք[5]:

Աջակցության և բժշկական օգնության դիմելը. Առնականության մասին հասարակության պատկերացումները խոչընդոտ են տղամարդկանց համար մասնագիտացված օգնության դիմելու հարցում, հատկապես երբ խոսքը սեռական ֆունկցիայի մասին է: Տղամարդիկ հակված են ավելի քիչ զբաղվել իրենց առողջությամբ՝ հետաձգելով բժշկական օգնության դիմելը և նախընտրելով ինքնուրույն լուծել խնդիրները: Մյուս կողմից, առօրյա կյանքում որևէ խնդրի առաջ կանգնելիս նրանք ևս հակված են այդ հարցը լուծել ինքնուրույն՝ քիչ մարդկանց ներգրավելով: Նման վարքագծին նպաստում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են առնականու-

[1] Փարքեր Ք., Ստեփլեր Ռ. (2017): Ամերիկացիները տղամարդկանց են համարում ֆինանսապես ապահովողներ, նույնիսկ այն պարագայում, երբ կանանց ներդրումն այս հարցում աճում է, «Pew» հետազոտական կենտրոն

[2] Կայա, Ա., Իուամոտո, Դ.Կ., Բրեդի, Ջ., Քլինթոն, Լ., Գրիվել, Մ. (2019): Առնականության նորմերի և գենդերային դերերի կոնֆլիկտի ազդեցությունը տղամարդկանց ապագա բարեկեցության վրա: Psychol. Men Masc.

[3] Սիլեռ Կ. Մ., Կերշոու Տ. Ս. (2020): Առնականության նորմերի, դեպրեսիայի և հոգեկան առողջության ծառայություններից օգտվելու հետ կապված ասպեկտները. ԱՄՆ-ում չափահասության տարիքին վերջերս հասած տղամարդկանց շրջանում կոհորտային հետազոտության արդյունքներ: Առցանց հրապարակում

[4] Սիզդեք Մ. Ռ. (2010): Առնականության նորմերին հավատարմությունը և առնականությանը վերագրելու գործընթացները վերջերս գործազուրկ դարձած տղամարդկանց մոտ դեպրեսիայի ախտանիշների կանխորոշիչ գործոն են

[5] Ստեյջիը Թ., Ստիավա Մ., Կիլինա Ռ. և այլք (2020): Առնականությունը և օգնության դիմելու պրակտիկան դեպրեսիա ունեցող տղամարդկանց շրջանում. որակական հետազոտություն

թյան իդեալները, վախը խոցելիություն ունենալուց և սոցիալական խարանները՝ կապված օգնություն փնտրելու հետ: Որոշ հետազոտողներ նկատում են, որ մշակութային նորմերը խրախուսում են տղամարդկանց ցուցաբերել քաջություն և անկախություն առողջության մասին հոգ տանելու հարցում՝ սահմանափակելով նրանց իրազեկվածությունը և համապատասխան ծառայություններից օգտվելը: Տարբեր մշակույթներում մշակութային պատկերացումներով ձևավորված ընկալումները ազդում են տղամարդկանց՝ առողջության վերաբերյալ իրազեկության և օգնության դիմելու վարքագծի վրա[6]: Մշակութային պատկերացումներն ու գործելաձևերը մեծ դեր են խաղում որոշ ազգությունների և մշակույթների պատկանող տղամարդկանց ընկալումների ձևավորման գործում[7]: Հարաբերությունների վերաբերյալ տղամարդկանց ընկալումները հաճախ ազդում են ավանդական գենդերային դերերի վրա՝ բացասական հետք թողնելով այս հարաբերություններում հաղորդակցվելու և զգացմունքներն արտահայտելու համատեքստում: Արդյունավետ հաղորդակցվելու և հուզական կապ հաստատելու դժվարությունները բացասաբար են անդրադառնում հարաբերությունների որակի վրա:

Այսպիսով, տարբեր ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ հասարակության ակնկալիքները և առնականությանը վերաբերող ավանդական նորմերը էականորեն ազդում են տղամարդկանց ընկալումների վրա, թե ինչ արարքներ պետք է կատարեն, ինչպես նաև առողջության, մտավոր բարեկեցության, հուզական արտահայտման և հարաբերությունների վրա: Այս բազմազան ընկալումների ըմբռնումը չափազանց կարևոր է նպատակային միջամտությունների և աջակցության համակարգեր ստեղծելու համար, որոնք հարմարեցված կլինեն տղամարդկանց հատուկ կարիքներին և խնդիրներին: Հայկական համատեքստում տղաների և տղամարդկանց մտահոգություններին արձագանքող հետազոտությունների բացակայությունը ընդգծում է անհրաժեշտությունը հանդես գալ նախաձեռնություններով, որոնք կուսումնասիրեն և կանդրադառնան այս օրինաչափություններին հենց հայ հասարակության ներսում: Այս հետազոտության նպատակն է ավելի մանրազնին հայացք նետել Հայաստանում տղամարդկանց եզակի կարիքներին, հոգսերին և մարտահրավերներին:

[6] Սմիթ, Ջ. Ա., Բրաունաք-Մայեր, Ա. և Ուիթերթ, Գ. (2006): Ի՞նչ գիտենք տղամարդկանց՝ օգնության դիմելու պրակտիկայի և առողջապահական ծառայություններից օգտվելու մասին: Ավստրալիայի բժշկական ամսագիր

[7] Սկովդալ, Մ., Կամպբել, Ս., Նյամուկապա, Ս. և Գրեգսոն, Ս. (2011): Երբ առնականությունը խանգարում է կանանց շրջանում ՄԻԱՎ վարակի բուժմանը. որակական հետազոտություն Զիմբաբվեում հակառետրովիրուսային բուժմանը հետևելու վերաբերյալ: Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի հարցերով միջազգային ասոցիացիայի ամսագիր

ԱՍՓՈՓԱԳԻՐ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Առնականությանը վերաբերող դերերը և ակնկալիքները

Այս հետազոտությամբ ուսումնասիրվել են հասարակության տեսակետները գենդերային դերերի վերաբերյալ և տղամարդկանց հանդեպ ունեցած ակնկալիքները: Արդյունքները ցույց են տալիս, որ կարծրատիպերը էապես ազդում են տղամարդկանց վարքագծի վրա և կարող են սահմանափակել նրանց ձգտումները: Հարցազրույցների մասնակիցների պատասխաններն ընդհանուր առմամբ համահունչ են եղել հասարակության չափանիշներին՝ ընդգծելով այն ճնշումը, որին ենթարկվում են տղամարդիկ, որպեսզի համապատասխանեն ավանդական դերերին, ինչպիսիք են ընտանիքի կերակրողը և պաշտպանը լինելը: Մասնագիտական առումով տղամարդկանցից ակնկալվում է, որ եկամտաբեր կարիերա ուենան և շարունակական աճ գրանցեն՝ ի տարբերություն կանանց, ում բարձր պաշտոններ զբաղեցնելու պահանջներ չեն ներկայացվում: Հետաքրքիր է, որ կանանց կողմից հնչեցված տեսակետները արտացոլում էին այս ակնկալիքները, բայց նշվում էր, որ կանանց նկատմամբ տղամարդկանց վերաբերմունքի փոփոխություն է տեղի ունեցել: Երկու սեռերի ներկայացուցիչներն էլ նշել են, որ ընտանիքում որոշումներ կայացնելու դինամիկան փոխվում է և անցում է կատարվում պարտականությունները կիսելու պրակտիկային:

Հասարակության տարբեր խմբեր ակնկալում են, որ տղամարդիկ գերազանց կատարեն տարբեր՝ հայր, ընկեր, մասնագետ լինելու դերերը: Հասարակական կառուցարկների կողմից ազդված այս ակնկալիքները մանկուց ի վեր սահմանափակում են տղամարդկանց հուզական արտահայտումը: Տղամարդիկ համարվում են հմուտ բանակցողներ՝ շնորհիվ հույզերը վերահսկելու ենթադրյալ կարողության՝ մի հատկանիշ, որը սնուցվում է հենց հասարակության առաջ քաշած սահմանափակումներով: Հաստատված գենդերային նորմերը հաճախ ամրապնդվում են աշխատավայրերում՝ ինքնավստահությունը վերագրելով պրոֆեսիոնալիզմին և հավերժացնելով կարծրատիպային վարքագիծը:

Ի վերջո, այս հետազոտությունը քողազերծում է հասարակության ակնկալիքների խորը ազդեցությունը տղամարդկանց վրա մասնագիտական, ընտանեկան և հուզական ոլորտներում: Այս արմատացած նորմերը ձևավորում են տղամարդկանց կյանքի ուղիները՝ ներազդելով նրանց ինքնության վրա և ամրապնդելով հաստատված գենդերային դերերը հայ հասարակության մեջ՝ տարբեր բնավորության գծեր, զբաղմունքներ, վարքագիծ և արտաքինի տեսք ունեցող բնակչության շրջանում:

Գենդերային հիմքով անհավասարություն, խտրականություն և մարտահրավերներ

Հատուկ շեշտ է դրվել այն ոլորտների վրա, որտեղ գերակայում են տղամարդկանց դեմ անարդարությունը և խտրականությունը (աշխատանք, հարաբերություններ, հաղորդակցություն, հուզական արտահայտում և զինվորական ծառայություն): Կին մասնակիցները նշել են, որ տղամարդկանց վրա դրված են մի շարք հուզական սահմանափակումներ, բայց միաժամանակ ակնկալում են, որ տղամարդիկ ուժեղ լինեն և հոգան ֆինանսական ծախսերը՝ այսպիսիվ ստեղծելով հակասական պահանջների և վարքագծի շրջափուլ:

Մասնակիցները նկարագրել են տղամարդկանց կյանքը որպես շարունակական պայքար՝ համահունչ Էրիկ Էրիկսոնի զարգացման տեսությանը, մասնավորապես նշելով, որ սոցիալական ակնկալիքները խնդիրներ են ստեղծում անհատականություն հաստատման ճանապարհին: Նշվել է տղամարդկանց նկատմամբ խտրականության մասին աշխատանքի, կրթության ոլորտներում և վարքագծի առումով՝ մատնանշելով կողմնակալ վերաբերմունք աշխատանքի ընդունման, դասակարգման և հաստատակամ լինելու վերաբերյալ հասարակության պահանջների հարցերում: Մասնակիցները նաև ընդունել են, որ տղամարդիկ ենթարկվում են հույզերն արտահայտելու հետ կապված սահմանափակումների, որոնք արմատավորված են մշակութային հայացքներում: Այնուամենայնիվ, 2020թ. պատերազմին հաջորդող զարգացումները հուշում են, որ կա վերա-

բերմունքի փոփոխություն տղամարդկանց կողմից իրենց հույզերն արտահայտելու հարցում, և լաց լինելը ավելի ընդունելի է դառնում:

Կին մասնակիցները ընդունել են, որ այս տեղաշարժը տեղի է ունեցել՝ վերագրելով այն վերաբերմունքի փոփոխությանը և սերնդափոխությանը և խրախուսելով տղամարդկանց հուզական արտահայտումը: Տղամարդկանց կողմից իրենց հույզերն արտահայտելու գնալով ավելի ընդունված դառնալը ցույց է տալիս, որ հասարակական նորմերը փոխվում են, ավանդական կարծրատիպերը կոտրվում են և ավելի անկաշկանդ միջավայր է ստեղծվում:

Ձգտումները քննարկելիս տղամարդ մասնակիցները տարբերակել են երազանքները իրագործելի նպատակներից՝ ընդգծելով պրագմատիզմն ու նպատակասլացությունը նպատակներին հասնելու հարցում: Ֆինանսական կայունությունը նշվել է որպես ընդհանուր և գործնական նպատակ, ինչի արդյունքում նրանք վաղ են մուտք գործում աշխատաշուկա: Թեև մասնակիցները ունեին թվացյալ անհասանելի ձգտումներ, ինչպիսիք են միջազգային հեղինակավոր ընկերությունում աշխատելը, նրանք նաև ընդունել են սահմանափակումները՝ կապված ծննդավայրի և հնարավորությունների հասանելիության հետ: Այսպիսով, տարբեր ոլորտներում տղամարդկանց առջև ծառացած խնդիրները լույս են սփռում խտրական պրակտիկայի և հասարակական ակնկալիքների վրա, որոնք խոչընդոտում են նրանց անձնական և մասնագիտական աճին:

Խնդիրների լուծման և հաղթահարման մեխանիզմները

Հասարակական տարբեր միջավայրերում տղամարդկանց առջև ծառացած մարտահրավերները բազմակողմանի են՝ ընդգրկելով անձնական, հարաբերութենական և սոցիալական մակարդակները: Մասնակիցները մատնանշել են դժվարություններ, որոնք բխում են հասարակության ակնկալիքներից և խտրականությունից, և ազդում են ինքնահիրացման, ընտանիքի, ընկերների հետ հարաբերությունների, աշխատաշուկայում մրցունակության, կրթության և ազգային հակամարտությունների հետ կապված պարտականությունների վրա: Տղամարդ մասնակիցները մտահոգություն են հայտնել կրթություն ստանալու ընթացքում աշխատելու վերաբերյալ (ի տարբերություն իրենց կին հասակակիցների), ինչը կարող է խաթարել կրթություն ստանալու գործընթացը և սահմանափակել հնարավորությունները:

Այս մարտահրավերները նաև համահունչ են կանանց արտահայտած տեսակետների հետ՝ լույս սփռելով անտեսանելի ճնշումների վրա, որոնց ենթարկվում են երիտասարդ տղամարդիկ: Արական սեռի ուսանողները հաճախ սկսում են աշխատել ուսման վաղ շրջանում՝ զրկվելով լիարժեք կրթություն ստանալու հնարավորությունից, քանի որ առաջնահերթություն են տալիս գումար վաստակելուն, ի տարբերություն աղջիկների, ովքեր ավելի ուշ են մուտք գործում աշխատաշուկա:

Աջակցություն փնտրելիս տղամարդիկ հաճախ դիմում են վստահելի անձանց՝ մայրերին, քույրերին, եղբայրներին և ընկերներին, ընդ որում, տղամարդ ընկերներին ու եղբայրներին գերադասում են դիմել ընդհանուր խնդիրների դեպքում, իսկ կանանց՝ հարաբերություններին կամ հուզական խնդիրներին առնչվող հարցերով: Հայրերն ավելի քիչ են հիշատակվել, ինչը ենթադրում է, որ վերջիններիս հետ հարաբերություններն ավելի ֆորմալ են և կենտրոնանում են կարիերայի հետ կապված քննարկումների շուրջ:

Իսկ կին մասնակիցները նշել են, որ տղամարդիկ հակված են ինքնուրույն լուծելու խնդիրները՝ հիմնականում աջակցության համար դիմելով ընկերներին, եթե խնդիրը սեփական ուժերով չի ստացվում լուծել: Երիտասարդ տղամարդիկ ավելի շուտ հակված են օգնության համար դիմելու ծնողներին, հատկապես մայրերին, մինչդեռ ավելի մեծ տարիքի տղամարդիկ ավելի անկախ են խնդիրները լուծելու հարցում: Այս վարքագծային օրինաչափությունները, որոնք խորապես արմատավորվել են հասարակության մեջ, ցույց են տալիս, որ հասարակության մեջ ընդունված է այն նորմը, որ տղամարդիկ պետք է խնդիրները սեփական ուժերով լուծեն,

բերմունքի փոփոխություն տղամարդկանց կողմից իրենց հույզերն արտահայտելու հարցում, և լաց լինելը ավելի ընդունելի է դառնում:

Կին մասնակիցները ընդունել են, որ այս տեղաշարժը տեղի է ունեցել՝ վերագրելով այն վերաբերմունքի փոփոխությանը և սերնդափոխությանը և խրախուսելով տղամարդկանց հուզական արտահայտումը: Տղամարդկանց կողմից իրենց հույզերն արտահայտելու գնալով ավելի ընդունված դառնալը ցույց է տալիս, որ հասարակական նորմերը փոխվում են, ավանդական կարծրատիպերը կոտրվում են և ավելի անկաշկանդ միջավայր է ստեղծվում:

Ձգտումները քննարկելիս տղամարդ մասնակիցները տարբերակել են երազանքները իրագործելի նպատակներից՝ ընդգծելով պրագմատիզմն ու նպատակասլացությունը նպատակներին հասնելու հարցում: Ֆինանսական կայունությունը նշվել է որպես ընդհանուր և գործնական նպատակ, ինչի արդյունքում նրանք վաղ են մուտք գործում աշխատաշուկա: Թեև մասնակիցները ունեին թվացյալ անհասանելի ձգտումներ, ինչպիսիք են միջազգային հեղինակավոր ընկերությունում աշխատելը, նրանք նաև ընդունել են սահմանափակումները՝ կապված ծննդավայրի և հնարավորությունների հասանելիության հետ: Այսպիսով, տարբեր ոլորտներում տղամարդկանց առջև ծառացած խնդիրները լույս են սփռում խտրական պրակտիկայի և հասարակական ակնկալիքների վրա, որոնք խոչընդոտում են նրանց անձնական և մասնագիտական աճին:

Խնդիրների լուծման և հաղթահարման մեխանիզմները

Հասարակական տարբեր միջավայրերում տղամարդկանց առջև ծառացած մարտահրավերները բազմակողմանի են՝ ընդգրկելով անձնական, հարաբերութենական և սոցիալական մակարդակները: Մասնակիցները մատնանշել են դժվարություններ, որոնք բխում են հասարակության ակնկալիքներից և խտրականությունից, և ազդում են ինքնահիրացման, ընտանիքի, ընկերների հետ հարաբերությունների, աշխատաշուկայում մրցունակության, կրթության և ազգային հակամարտությունների հետ կապված պարտականությունների վրա: Տղամարդ մասնակիցները մտահոգություն են հայտնել կրթություն ստանալու ընթացքում աշխատելու վերաբերյալ (ի տարբերություն իրենց կին հասակակիցների), ինչը կարող է խաթարել կրթություն ստանալու գործընթացը և սահմանափակել հնարավորությունները:

Այս մարտահրավերները նաև համահունչ են կանանց արտահայտած տեսակետների հետ՝ լույս սփռելով անտեսանելի ճնշումների վրա, որոնց ենթարկվում են երիտասարդ տղամարդիկ: Արական սեռի ուսանողները հաճախ սկսում են աշխատել ուսման վաղ շրջանում՝ զրկվելով լիարժեք կրթություն ստանալու հնարավորությունից, քանի որ առաջնահերթություն են տալիս գումար վաստակելուն, ի տարբերություն աղջիկների, ովքեր ավելի ուշ են մուտք գործում աշխատաշուկա:

Աջակցություն փնտրելիս տղամարդիկ հաճախ դիմում են վստահելի անձանց՝ մայրերին, քույրերին, եղբայրներին և ընկերներին, ընդ որում, տղամարդ ընկերներին ու եղբայրներին գերադասում են դիմել ընդհանուր խնդիրների դեպքում, իսկ կանանց՝ հարաբերություններին կամ հուզական խնդիրներին առնչվող հարցերով: Հայրերն ավելի քիչ են հիշատակվել, ինչը ենթադրում է, որ վերջիններիս հետ հարաբերություններն ավելի ֆորմալ են և կենտրոնանում են կարիերայի հետ կապված քննարկումների շուրջ:

Իսկ կին մասնակիցները նշել են, որ տղամարդիկ հակված են ինքնուրույն լուծելու խնդիրները՝ հիմնականում աջակցության համար դիմելով ընկերներին, եթե խնդիրը սեփական ուժերով չի ստացվում լուծել: Երիտասարդ տղամարդիկ ավելի շուտ հակված են օգնության համար դիմելու ծնողներին, հատկապես մայրերին, մինչդեռ ավելի մեծ տարիքի տղամարդիկ ավելի անկախ են խնդիրները լուծելու հարցում: Այս վարքագծային օրինաչափությունները, որոնք խորապես արմատավորվել են հասարակության մեջ, ցույց են տալիս, որ հասարակության մեջ ընդունված է այն նորմը, որ տղամարդիկ պետք է խնդիրները սեփական ուժերով լուծեն,

և այս օրինաչափությունը ճանաչել են և՛ տղամարդ, և՛ կին մասնակիցները:

Առողջական խնդիրներ

Տղամարդկանց առողջության շուրջ քննարկումները բացահայտել են մի շարք կարևոր ասպեկտներ: Մասնակիցները ընդգծել են բնակչության սահմանափակ իրազեկությունը այն մասին, թե որտեղ կարելի է օգնության դիմել կոնկրետ առողջական խնդիրների դեպքում: Խնդիրն էլ ավելի է սրվում ապատեղեկատվության պատճառով, ինչը հանգեցնում է անհապաղ բժշկական օգնությանը դիմելու կարևորությունը թերագնահատելուն: Սա հատկապես վերաբերում է տղամարդկանց սեռական առողջության խնդիրներին, քանի որ արմատացած հասարակական նորմերը սահմանափակում են սեռական հարաբերությունների վերաբերյալ բաց քննարկումները: Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք հաճախ ամաչում են զբաղվել սեռական առողջության հետ կապված հարցերով՝ բժշկական խորհրդատվության դիմելով միայն այն ժամանակ, երբ իրավիճակն անտանելի է դառնում:

18-25 տարեկան երիտասարդ մասնակիցները նշել են բժշկի, հատկապես ուրոլոգի սեռը որպես արգելք բժշկական խորհրդատվության դիմող տղամարդկանց համար: Մասնավորապես, նշվել է, որ տղամարդիկ անհարմար են զգում սեռական առողջության վերաբերյալ խորհրդատվություն և ստուգումներ անցնել կին բժիշկների մոտ: Տղամարդիկ նախընտրություն են տվել ծանոթ բժիշկներին կամ բժշկական գիտելիքներ ունեցող ընտանիքի անդամներին՝ ցուցաբերելով անվստահություն առողջապահական համակարգի նկատմամբ:

Տղամարդկանց ընկալումներում դրական տեղաշարժ է տեղի ունեցել հոգեկան առողջության հետ կապված հոգեբանական խորհրդատվության դիմելու հարցում, ինչը կարելի է վերագրել հետպատերազմական իրողություններին, երբ հոգեբանական վերականգնումը սկսեց ավելի նորմալացվել: Այնուամենայնիվ, մարզերը ներկայացնող մասնակիցների շրջանում դրսևորվել են հասարակական ընկալումներ, որոնք հոգեբանին դիմելը կապում են մտավոր խնդիրներ կամ խանգարումներ ունենալու հետ, ինչը հանգեցնում է պիտակավորման և խարանի: Ավագ սերնդի ներկայացուցիչները հոգեբանին և հոգեբույժին հաճախ միմյանցից չեն տարբերակում, ինչը նպաստում է հոգեբանական օգնության դիմելու վերաբերյալ թյուր պատկերացումներին: Մասնակիցները հոգեբաններին այցելելու դժկամություն են հայտնել՝ հաճախ քողարկելով համայնքի ներկայացուցիչների կողմից խարանի և քննադատության ենթարկվելու վախերը: Մասնակիցներն աջակցության համար մեծապես ապավինում են հարազատներին կամ ծանոթներին, չնայած այն փաստին, որ մասնագիտները խնդրին նայում են այլ տեսանկյունից և ավելի հստակ ուղղորդում են ապահովում:

Լավ հայր լինելու վերաբերյալ ընկալումները

Երեխաների նկատմամբ հոր սիրո արտահայտման վրա ազդում են մի շարք գործոններ, այդ թվում՝ երեխաների տարիքը, սեռը և ինչպես հոր, այնպես էլ երեխայի բնավորության առանձնահատկությունները: Մասնակիցները մատնանշել են տարբերություններ հայրերի կողմից զգացմունքներն արտահայտելու հետ կապված՝ մասնավորապես նշելով, որ ոմանք դժվարանում են, իսկ ոմանք էլ իրենց սերը շատ հստակ արտահայտում են: Ներկայացվել է հուզական արտահայտման առումով լավ հոր հետևյալ կերպարը՝ նա խթանում է ամուր կապի ստեղծումը, զավակին բավարար ժամանակ է տրամադրում, լավ ընկեր և օրինակ է, ակտիվորեն մասնակցում է դաստիարակությանը և երեխաներին վերաբերվում է որպես հավասարի:

Քննարկումներում ընդգծվել է այն ընկալումը, որ մայրերի համեմատությամբ, հայրերի արտահայտած սերը հաճախ ավելի քիչ անմիջապես տեսանելի է, ինչը հանգեցնում է բարդ հարաբերությունների: Երբեմն հայրերին համարում են ավելի խիստ՝ պայմանավորված հասարակական նորմերով, բայց դրա պատճառ կա-

րող են լինել զսպված հույզերը կամ անցյալի տրավմաները: Լավ հայր լինելը պայմանավորված է լավ ամուսին լինելով՝ ծնողների օրինակի սկզբունքով ազդելով երեխայի զարգացման վրա:

Մասնակիցները շեշտել են գիտակցված որոշման կարևորությունը. երբ տղամարդը հայր է դառնում, այդպիսով ընդգծում է լավ ծնող լինելու պատրաստակամությունը: Նրանք նշել են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ընտանիքի անվտանգությունն ապահովելը, երեխաներին ինքնուրույն դարձնելը և անձնական տարածք տրամադրելը՝ միաժամանակ հավասարակշռելով հասարակության ակնկալիքները, հատկապես հայրերի վրա գործադրվող ճնշումը՝ լինելու ընտանիքի հիմնական կերակրողը:

Ինչ վերաբերում է երեխաների զարգացմանը, մասնակիցները կարևորել են ծնողների կողմից երեխայի ինքնուրույնությանը նպաստելու, ուղղորդելու, խորհուրդներ տալու և խնդիրներ լուծելու հմտություններ սովորեցնելու կարևորությունը: Մտահոգություններ են հնչեցվել անձնական երջանկությունն անտեսելու հետ կապված, ինչը նշանակում է, որ տղամարդիկ ունեն անձնական հանգստի և առօրյա պարտականություններից կտրվելու կարիք, հատկապես հայրերը, որոնք բախվում են հասարակական ճնշման՝ որպես ընտանիքի հիմնական կերակրողներ:

Մասնակիցները նաև քննարկել են Ֆրոյդի հոգեսեռական զարգացման տեսությունը, ըստ որի մանկության փորձառությունները կարող են ազդել ապագա զուգընկերոջ ընտրության և ռոմանտիկ նախասիրությունների վրա: Բացի այդ, մասնակիցները նկատել են տարբերություններ հայրական սիրո մեջ՝ կախված երեխայի սեռից: Մասնավորապես, նշվել է, որ հայրերը առանձնահատուկ ջերմություն են ցուցաբերում դուստրերի նկատմամբ և ավելի խիստ են որդիների հետ՝ դա վերագրելով երեխաներին ապագա կյանքին նախապատրաստելուն:

Ամփոփելով՝ մասնակիցները ուրվագծել են լավ հորը բնորոշ գծերը. լինել լավ ամուսին, լավ օրինակ, ընկեր, դաստիարակ և երեխաների համար խորհրդատու, խթանել երեխաների ինքնուրույնությունը՝ միաժամանակ բացահայտորեն արտահայտելով սեր և հոգատարություն և դրանք հարմարեցնելով երեխայի տարիքին: Նրանք նաև ընդունել են, որ սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքն անընդունելի է՝ միաժամանակ գիտակցելով, որ հայկական մշակույթում հասարակության ակնկալիքները կարող են հանգեցնել հուզական կապերի առումով տարբերությունների տղաների և աղջիկների միջև:

Անհրաժեշտ փոփոխություններ և անցումներ

Տղամարդկանց դերերի և հասարակության ակնկալիքների փոփոխության մասին քննարկումները բացահայտել են հետաքրքրաշարժ տարբերություններ մայրաքաղաքից և մարզերից եկող մասնակիցների միջև՝ ընդգծելով հասարակական փոփոխությունների վերաբերյալ հակասական տեսակետների առկայությունը: Երևանից եկող մասնակիցները նկատել են աստիճանական տեղաշարժ դեպի ավելի առաջադեմ հայացքներ, որոնք համահունչ են եվրոպական չափորոշիչներին, բայց նաև ընդունել են, որ տեղի են ունենում բախումներ, երբ ավանդական համայնքները ներկայացնող անձինք քաղաք են բերում կարծրատիպային տեսակետներ: Այնուամենայնիվ, մարզերը ներկայացնող մասնակիցներն ընդգծել են հասարակության ընկալումներում փոփոխությունների անհրաժեշտությունը, որպեսզի տղամարդկանց կյանքն ավելի հեշտանա:

Մարզային համայնքներից եկող մասնակիցները նշել են մի քանի հիմնական ոլորտներ, որտեղ փոփոխություններ են անհրաժեշտ հասարակության ներսում խնդիրների լուծման համար.

- **Ընկերություն կանանց և տղամարդկանց միջև.** Մարզային համայնքներում գերակշռող համոզմունքները հաճախ սահմանափակում են հակառակ սեռի ներկայացուցիչների միջև ընկերության հնարավորությունը՝ դիտարկելով ռոմանտիկ սերը կամ ամուսնությունը որպես միակ

ընդունելի արդյունք: Մասնակիցները շեշտել են այս ընկալումը փոխելու անհրաժեշտությունը՝ հանուն հասարակության մեջ ավելի առողջ հարաբերությունների:

- **Իդեալական տարիք ամուսնության համար.** Որպես խնդիր մատնանշվել է հատկապես կանանց նկատմամբ առկա հասարակական ճնշումը՝ ամուսնանալ մինչև 25 տարեկան հասակը: Այս ճնշմանը ենթարկվում են նաև տղամարդիկ՝ ստիպելով նրանց հապճեպ որոշումներ կայացնել, որոնք հիմնված են ոչ թե անձնական նախընտրությունների, այլ հասարակության ակնկալիքների վրա:
- **Ֆինանսական պատասխանատվություն ծնողների համար.** Չգրված ակնկալիքը, որ արու զավակը պատասխանատվություն է կրում ծնողներին իրենց ողջ կյանքի ընթացքում ֆինանսապես աջակցելու համար, դիտվել է որպես խտրական՝ սահմանափակելով անձի ազատությունն ու ընտանիքի ներսում ընտրություններ կատարելու հնարավորությունը: Մասնակիցները հանդես են եկել այս հարցում ավելի ճկուն դեր ունենալու օգտին:
- **Աղջիկների և կանանց ակնկալիքները տղաների և տղամարդկանց վերաբերյալ.** Հասարակությունը պետք է դադարեցնի իդեալականացված վարքագիծը ուրիշներին պարտադրելը, հատկապես գյուղական վայրերում: Կարևոր է համարվել վերագնահատել այս ակնկալիքները:

Կին մասնակիցների մտահոգությունները՝ կապված կանանց սեռական արտահայտմանն առնչվող հնացած սահմանափակումների և տղամարդկանց հուզական կայունության վերաբերյալ ակնկալիքների հետ շատ նման են եղել մարզերը ներկայացնող տղամարդ արտահայտած մտահոգություններին: Նրանք կարևորել են հնացած ավանդույթները վերացնելուն ուղղված կրթական և մշակութային փոփոխությունների անհրաժեշտությունը:

Ե՛վ տղամարդ, և՛ կին մասնակիցները շեշտել են անձնական պատասխանատվությունը հասարակության պատկերացումներում փոփոխությունների խթանման գործում: Նրանք նշել են, որ իրենց ներսում փոփոխություններ նախաձեռնելը կարող է նպաստել սոցիալական նորմերի և ակնկալիքների ավելի լայն փոխակերպումների: Ընկալումների և վերաբերմունքի այս ներքին փոփոխությունը դիտվել է որպես կենսական նշանակություն ունեցող գործոն հասարակության ներսում իմաստալից փոփոխություններ առաջ մղելու հարցում:

Տղամարդկանց համար նախատեսված կայք

Մասնակիցները նշել են, որ Հայաստանում տղամարդկանց բազմազան կարիքները հասցեագրելուն ուղղված առցանց հարթակը կարող է շատ օգտակար լինել: Նրանք նաև ընդգծել են հոգեկան առողջությանը, անձնային աճին և շրջապատ ստեղծելուն ուղղված ռեսուրսներ ունենալու անհրաժեշտությունը՝ նշելով, որ այս կարիքները բավարարող տեղայնացված հարթակներ չկան: Նրանք նշել են տարբեր ոչ ֆորմալ վայրեր, որտեղ տղամարդիկ կարող են հավաքվել և քննարկումներ ունենալ, ինչը ցույց է տալիս, որ կա ընկերների կամ ծանոթների հետ տարբեր թեմաների շուրջ զրուցելու տարածքներ ունենալու ցանկություն: Նրանց դիտարկումների հիման վրա առանձնացվել են մի քանի կարևոր նկատառումներ նման հարթակի համար. (ա) մշակութային և լեզվական ադապտացում, (բ) մասնագիտական տեղեկատվություն, (գ) առցանց և անցանց հարթակների նախընտրություններ, (դ) վստահություն և վստահելիություն, (ե) հմտություններ և զբաղվածություն:

Մասնակիցներն ընդգծել են քննարկման՝ իրենց համար կարևոր թեմաներ, այդ թվում՝ սեռական առողջությունը, հարաբերությունները, հոգեբանական խորհրդատվությունը, առողջության հետ կապված խնդիրները, տարբեր մշակույթներում տղամարդկանց հատուկ մարտահրավերները և մեքենաների հետ կապված թեմաները: Հարթակը մշակելիս պետք է հաշվի առնել մայրաքաղաքի և մարզային համայնքների

մասնակիցների միջև նախապատվությունների տարբերությունները՝ ապահովելու, որ այն արդյունավետորեն հասցեագրի տարբեր խմբերի բազմազան կարիքները: Տարբեր առցանց ռեսուրսներ առաջարկելը, դեմ առ դեմ շփումները և անանուն զրուցարանները կարող են ձևավորել համապարփակ հարթակ, որը հասանելի կլինի լայն հանրությանը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը

Առաջնային նպատակն էր նախաձեռնել ընդգրկուն աշխատանք՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում հայ տղաների և տղամարդկանց փորձառությունն ըմբռնելուն: Հետազոտությամբ փորձ է արվել երևան հանել չհնչեցրած հարցերը, մտահոգությունները և աջակցության մեխանիզմները, որոնց վրա նրանք հիմնվում են դժվարին ժամանակներում: Հետազոտության գերնպատակն էր հիմք ստեղծել ՀՀ-ում արական սեռի բնակչության կարիքները սպասարկող մասնագիտացված կայքէջի ստեղծման համար: Սա ենթադրում էր համագործակցություն ոլորտի փորձագետների, հոգեբանների և մասնագետների հետ հուսալի և մատչելի բովանդակություն ստեղծելու գործում: Հարթակի նպատակն է տրամադրել գաղտնի խորհրդատվություն, ճշգրիտ տեղեկատվություն և անհրաժեշտության դեպքում ուղղորդել փորձառու մասնագետների մոտ:

Մոտեցումը և տվյալների հավաքագրումը

Այս հետազոտությունում կիրառվել է որակական մեթոդաբանություն, մասնավորապես ֆոկուս- խմբային քննարկումներ (ՖԽՔ-ներ)՝ որպես խնդիրը խորն ըմբռնելու առաջնային միջոց: Ֆոկուս-խմբային քննարկումների մեթոդն ընտրվել է սույն հետազոտության համար, քանի որ այն թույլ է տալիս ավելի լավ պատկերացում կազմել կոնկրետ խմբի մասին, ուսումնասիրել թեմայի շուրջ միաձայնության աստիճանը, երևան հանել կարծիքներ և ներըմբռնումներ, որոնք հնարավոր չէր լինի պարզել հարցաթերթիկ լրացնելու կամ անհատական հարցազրույցների միջոցով, ինչպես նաև կարծիքներ հավաքագրել նախատեսվող կայքի վերաբերյալ:

Ֆոկուս-խմբային քննարկումները հաճախ օգտագործվող հետազոտական մեթոդ են թիրախային լսարանից որակական տվյալներ հավաքագրելու համար: Դրանց առավելություններից է այն, որ թույլ են տալիս ավելի խորը պատկերացում կազմել խնդրո առարկայի մասին, խմբային քննարկումներ ունենալ և փորձարկել նոր պրոդուկտները: Ֆոկուս-խմբային քննարկումերն ունեն նաև որոշ թերություններ, ինչպիսիք են ուրիշի կարծիքին հակվելու հնարավորությունը, տվյալներն ընդհանրացնելու հետ կապված սահմանափակումները և մասնակիցների վարքագծի նկատմամբ սահմանափակ վերահսկողությունը: Այնուամենայնիվ, ի գիտություն ընդունելով այս մեթոդի բոլոր առավելություններն ու թերությունները, հաշվի առնելով սույն հետազոտության համատեքստը և թեման՝ այս մեթոդը համարվել է ամենապատշաճը:

Պատկեր 1. Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների ընտրության քվոտան



Բազմազանություն ապահովելու սկզբունքը մասնակիցների ընտրության անկյունաքարն է եղել: Տարբեր տարիքի, տարբեր կենսագրություններ ունեցող, տարբեր աշխարհագրական շրջաններ ներկայացնող, սոցիալ-տնտեսական դիրք զբաղեցնող տղամարդիկ են ընտրվել՝ ապահովելու տեսակետների բազմազանությունը: Նպատակն էր ծածկել փորձառությունների և տեսակետների լայն տիրույթ՝ գիտակցելով տարբեր խմբերի առանձնահատկությունները: Միաժամանակ ներառվել է կին ներկայացուցիչներից բաղկացած զուգահեռ հսկիչ խումբ: Այս կանխամտածված հակադրությունը թույլ է տվել համապարփակ ըմբռնում ունենալ՝ ոչ միայն ուսումնասիրելով տղամարդկանց տեսակետները, այլև քննելով, թե ինչպես են կանայք ընկալում և մեկնաբանում տղամարդկանց հետ կապված այս խնդիրները:

Ընդհանուր առմամբ, հետազոտությունում ընդգրկվել է **տղամարդկանցից բաղկացած 5 խումբ** և **կանանցից բաղկացած 2 խումբ**՝ ընդհանուր առմամբ 60 տղամարդ և 24 կին Հայաստանի տարբեր մարզերից և մայրաքաղաքից: Ընտրանք ձևավորելու գործընթացը գոհացուցիչ է եղել, քանի որ հավաքագրված տվյալները հասել են հագեցվածության մակարդակի, այսինքն՝ մի վիճակի, երբ լրացուցիչ տեղեկություններն այլևս նոր օրինաչափություններ չեն բացահայտում: Խմբային քննարկումների ընթացքում հետևողականորեն ի հայտ են եկել կրկնվող թեմաներ և օրինաչափություններ, ինչը խնդրի համապարփակ ուսումնասիրության ցուցանիշ է:

Աղյուսակ 1. Ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների բաշխումը

Մարզ	Խումբ	Մասնակիցներ	Տարիքային խումբ	Մասնակիցների քանակը	Հանդիպումների քանակը
Երևան	Հիմնական	Տղամարդ	18-25	12	1
Երևան	Հիմնական	Տղամարդ	26-34	12	1
Արմավիր	Հիմնական	Տղամարդ	18-25	12	1
Կոտայք	Հիմնական	Տղամարդ	26-34	12	1
Արարատ	Հիմնական	Տղամարդ	18-34	12	1
Երևան	Հսկիչ	Կին	20-30	12	1
Տարբեր մարզեր	Հսկիչ	Կին	20-30	12	1
Ընդամենը				84	7

Մասնակիցների ընտրությունը

- Մասնակիցները հավաքագրվել են կրթական հաստատությունների, համայնքային կենտրոնների և այլ հասանելի ուղիներով:
- Ջանքեր են գործադրվել՝ ապահովելու տարբեր սոցիալ-տնտեսական միջավայրեր և մարզեր ներկայացնող արական և իգական սեռի ներկայացուցիչների ներկայացվածությունը:

Տվյալների վերլուծություն

Սույն հետազոտության մեջ կիրառվել է համակարգային համեմատական վերլուծություն, որը ենթադրում է բծախնդիր մոտեցում՝ ուղղված ֆոկուս-խմբային քննարկումների արդյունքում ձեռք բերված տվյալներից կրկնվող օրինաչափությունների, մտահոգությունների և ի հայտ եկող թեմաների վերհանմանը: Որակական վերլուծության մեջ արմատացած այս մեթոդը ապահովել է տվյալների պատշաճ կազմակերպչական կառուցվածք՝ նպաստելով տվյալների համապարփակ և նրբերությունների հետ հաշվի նստող մեկնաբանության:

Բոլոր քննարկումները ձայնագրելը և սղագրելը թույլ են տվել ունենալ տեղեկատվության հարուստ շտեմարան: Սղագրությունները մանրակրկրտորեն համեմատվել են բնօրինակ ձայնագրությունների հետ: Այս բծախնդիր մոտեցման շնորհիվ հնարավոր է եղել ապահովել ճշգրտություն և հավատարիմ մնալ կենդանի քննարկումների ընթացքում վերհանված նրբություններին: Ցանկացած անհամապատասխանություն վերանայվել և համապատասխանեցվել է հետազոտության համար նախանշված ուղղություններին և թեմաներին:

Երբ տվյալները սկսել են ձև ստանալ, գործի է դրվել համակարգային համեմատական վերլուծության մեթոդը: Սա ենթադրում էր սղագրված տվյալների հատվածների համակարգված համեմատություն՝ փնտրելով նմանություններ, տարբերություններ և կրկնվող թեմաներ: Այս համեմատությունները բերել են օրինաչափությունները բյուրեղացման՝ թույլ տալով ավելի խորն ըմբռնել հիմքում ընկած նարատիվները:

Տվյալներում կրկնվող օրինաչափությունների և նմանությունների ի հայտ գալը հիմք է հանդիսացել հաջորդիվ իրականացված վերլուծության համար: Հիմնական պատկերացումներն արտաբերելու նպատակով այս օրինաչափությունները բաժանվել են խմբերի, մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկվել և մեկնաբանվել: Թեմաները, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է քննարկումների ընթացքում հնչեցված բազմակողմ տեսակետների մի կողմը, բնականորեն դուրս են բերվել տվյալներից:

Էթիկական նկատառումներ

Բոլոր մասնակիցներից ստացվել է բանավոր իրազեկված համաձայնություն՝ երաշխավորելով նրանց կամավոր մասնակցությունը և գաղտնիությունը: Միջոցներ են ձեռնարկվել մասնակիցների անանունությունը պաշտպանելու համար, հատկապես, երբ ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ քննարկվում էին զգայուն թեմաներ: Քննարկումները սղագրվել են այնպես, որ անհնար լինի պատասխանները նույնացնել անձանց հետ: Տվյալների վերլուծությունը կատարվել է ընդհանրացված եղանակով:

Հետազոտության սահմանափակումները

Մենք ընդունում ենք Հայաստանում հայ տղամարդ բնակչության ողջ սպեկտրը ներկայացնող տարբեր մասնակիցներ հավաքագրելու հնարավոր սահմանափակումը: Այնուամենայնիվ, ռիսկերը մեղմվել են՝ նախնական չափանիշներին ու քվոտաներին հավատարիմ մնալու և տվյալների հագեցվածություն ապահովելու միջոցով:

Այսպիսով, հետազոտությունում կիրառվել է որակական մեթոդաբանություն (ֆոկուս-խմբային քննարկումներ)՝ համակողմանիորեն ըմբռնելու տղամարդկանց ընկալումները, մտահոգությունները և կարիքները: Էթիկական նկատառումները հաշվի են առնվել, և հնարավոր սահմանափակումները ի գիտություն են ընդունվել՝ ապահովելու հետազոտության արդյունքների ամբողջականությունն ու հուսալիությունը:

Հ Ի Մ Ն Ա Կ Ա Ն ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

Տղամարդկանց վերագրվող դերերը և ակնկալիքները

Համաձայն գոյություն ունեցող տեսությունների՝ հասարակության մեջ գենդերային դերերը ենթադրում են ակնկալիքներ, թե մենք ինչ պետք է անենք, ինչ խոսենք, ինչպես հագնվենք, մեզ խնամենք և մեզ պահենք՝ ելնելով մեզ վերագրվող սեռից: Այս ակնկալիքներն ու օրինակները ուսուցանվում և կրկնօրինակվում են երեխայի վաղ տարիքից: Երեխաները հետևում են այն օրինաչափություններին, որոնց ականատես են լինում իրենց շրջապատում: Երբ անձը ակնկալվող օրինաչափությունները չի կրկնօրինակում, իր վարքագիծը համարում են շեղված և սահմանված չափանիշներին չհամապատասխանող: Մինչդեռ յուրաքանչյուր հասարակություն, էթնիկ խումբ և մշակույթ ունի գենդերային դերերի հետ կապված ակնկալիքներ, բայց դրանք կարող են խմբից խումբ շատ տարբեր լինել: Այդ ակնկալիքները կարող են նաև ժամանակի ընթացքում փոխվել:

Կարծրատիպը լայնորեն ընդունված դատողական կամ կողմնակալ կարծիք է անձի կամ խմբի մասին, չնայած այն հանգամանքին, որ այն չափազանց պարզեցված է և ոչ միշտ ճշգրիտ: Կարծրատիպերը կարող են հանգեցնել անհավասար և անարդար վերաբերմունքի՝ պայմանավորված անձի սեռով: Գենդերային կարծրատիպերի առանձնահատկությունները ավելի լավ հասկանալու համար դրանք կարելի է դասակարգել չորս խմբի[8].

- **Բնավորության գծեր**. Ակնկալիքները հաճախ թելադրում են, որ կանայք ունենան բնավորության հարմարվողական և զգացմունքային գծեր, մինչդեռ տղամարդկանցից ակնկալվում է դրսևորել ինքնավստահություն և ագրեսիա:
- **Կենցաղային վարքագիծ.** Տարածված ակնկալիքն այն է, որ կանայք զբաղվեն երեխաների խնամքով, կերակուր պատրաստեն և ապահովեն տան մաքրությունը, իսկ տղամարդիկ էլ զբաղվեն ֆինանսական հարցերով, մեքենաների սպասարկմամբ և տան վերանորոգմամբ:
- **Մասնագիտություն**. Կարծրատիպային ենթադրությունները բերում են այն համոզմունքին, որ ուսուցչի և բուժքրոջ մասնագիտություններում պետք է և գերակշռում են կանայք, մինչդեռ օդաչուի, բժշկի և ճարտարագետի մասնագիտություններում գերակշռում են տղամարդիկ:
- **Արտաքին տեսք**. Գենդերային նորմերը կարգադրում են, որ կանայք ունենան նրբագեղ կազմվածք, մինչդեռ տղամարդկանցից ակնկալվում է լինել բարձրահասակ և մկանուտ: Բացի այդ, հագուստի ու հարդարանքի ընտրությունը համապատասխանում է գենդերային դերերի հետ կապված կարծրատիպերին՝ տղամարդիկ ունեն կարճ սանրվածք և կրում են տաբատ, իսկ կանայք դիմահարդարվում են և զգեստ են կրում:

Այս հետազոտության նպատակն էր բացահայտել հասարակության ընկալումները գենդերային դերերի և արական սեռի բնակչության հետ կապված ամենատարածված ակնկալիքների վերաբերյալ: Ըստ հետազոտության հիմքում ընկած վարկածի՝ կարծրատիպերը զգալիորեն ազդում են տղամարդկանց վարքագծի վրա և կարող են խոչընդոտ հանդիսանալ երազանքներին և ձգտումներին հետամուտ լինելու ճանապարհին:

[8] Վերցվել է «Պլանավորված ծնողավարում» հարթակից՝ https://www.plannedparenthood.org/

Հետազոտության մասնակիցների արտահայտած ընկալումները, անկախ նրանց բնակության վայրից, բացահայտում են ուղիղ կորելյացիա հասարակության արական սեռի ներկայացուցիչներին պարտադրվող լայնորեն ընդունված նորմերի հետ: Հասարակական նորմերին և ընտանեկան ավանդույթներին համապատասխանելու ճնշումը հատկապես ակնհայտ էր մարզերի համատեքստում: Մասնակիցները շեշտել են, որ հասարակությունը տղամարդկանցից կոնկրետ ակնկալիքներ ունի, ինչպիսիք են ուժեղ լինելը, ընտանիքի հիմնական կերակրողի դերը ստանձնելը և ընտանիքը պաշտպանելը: Հետաքրքիր է, որ մասնակիցներն ընդգծել են, թե ինչպես են անկայուն քաղաքական իրավիճակում և հակամարտությունների ժամանակ մեծանում հասարակության ակնկալիքները տղամարդկանցից, որ վերջիններս դրսևորեն խիզախություն և ուժ:

«Տղամարդը համարվում է ընտանիքի հենասյունը, ով պատասխանատու է հիմքը և դրվածքը դնելու համար: Հայկական ընտանիքներում այս կարծրատիպը, այս ավանդույթը կարծես արմատացած է մեր մտածելակերպի մեջ: Բոլոր միջավայրերում տղամարդուց ակնկալում են, որ արտահայտվի, արտահայտի իր մտքերը և դրսևորի վարքագիծ, որն արտացոլում է տիպիկ տղամարդու հատկանիշները»:

Տղամարդ, 18-25 տարեկան, մարզային խումբ

«Տղամարդիկ պետք է մարմնավորեն մի քանի բարոյական արժանիքներ՝ քաջություն, պարզություն և նվիրվածություն իրենց ընտանիքին և հարազատներին: Ինչ վերաբերում է մասնագիտությանը, նրանք պետք է ձգտեն ունենալ այնպիսի կարիերա, որը կվայելեն և որի միջոցով կկարողանան պահել իրենց ընտանիքը: Եթե բացի այս որակներն ունենալուց, նրանք կարողանան հայրենիքի համար ինչ-որ բան անել, շատ ավելի լավ կլինի: Անկախ ձեռքբերումներից՝ իրականում կարևորն այն է, որ տղամարդը պահպանի իր էությունը որպես տղամարդ, պահպանի իր բնավորությունը առանց շեղումների, հավատարիմ մնա ինքն իրեն»:

Տղամարդ, 26-35 տարեկան, Երևանի խումբ

Ինչ վերաբերում է մասնագիտություններին, ապա ուղիղ կապ է նկատվում տղամարդու՝ ընտանիքի հիմնական կերակրողը լինելու գաղափարի հետ: Ուստի, հասարակության ակնկալիքները թելադրում են, որ տղամարդիկ պետք է ընտրեն այնպիսի մասնագիտություններ, որոնք խոստանում են հեշտ և երաշխավորված եկամուտ: Բացի այդ, հասարակության ճնշումը տարածվում է արտաքին տեսքի և հագուստի ընտրության վրա: Սա հատկապես ընդգծված է գյուղական համայնքներում, որտեղ որոշ հանդերձանք համարվում է ոչ պատշաճ և անընդունելի:

«Ես ունեմ շոր, ես էդ շորը չեմ կարողանում հագնել էս հասարկության մեջ, որովհետև ես ապրում եմ Ավշար գյուղում, մի քիչ կարծրատիպերով ավելի կոշտ, մտածելակերպով ավելի խիստ, ես էդ նույն հագուստը կարամ հագնեմ շատ ազատ, օրինակ , Երևանում, Մասիսում, որովհետև ընտեղի հասարկությունը, համեմատած մեր գյուղի, մի քիչ ավելի ցրվածա, ավելի լայն են մտածում»:

Տղամարդ, 18-25 տարեկան, մարզային խումբ

Մասնակիցները միաձայն պնդել են, որ անկախ սեռից՝ անձը պետք է իր մասնագիտության մեջ հմուտ և փորձառու լինի, և դա է անձնական հաջողության չափանիշը: Այնուամենայնիվ, նրանք ընդգծել են հասարակության ճնշումը, որը գործադրվում է տղամարդկանց վրա, որպեսզի վերջիններս գերազանց կատարեն իրենց աշխատանքը՝ այդպիսով վերահաստատելով իրենց առավելությունը և հասնելով գերիշխող սեռի ներկայացուցչի կոչմանը: Նշվել է նաև, որ հասարակությունն ակնկալում է, որ տղամարդիկ իրենց մասնագիտությունում դրսևորեն առաջադիմություն և առաջնորդություն, անընդհատ աճեն՝ հասարակությունում իրենց դիրքը վերահաստատելու համար: Այս ակնկալիքը կտրուկ հակադրվում է այն ճնշմանը, որին ենթարկվում են աղջիկներն ու կանայք, որոնց հասարակությունը նուն պահանջը չի ներկայացնում, այն է՝ մշտապես ձգտել իրենց կարիերայում կամ մասնագիտության մեջ ամենաբարձր դիրքը գրավելուն: Անշուշտ, մասնագիտական կյանքի հետ կապված այս ակնկալիքները, որը հասարակությունն ունի տղամարդկանցից, նպաստում են արդեն գոյություն ունեցող բեռին, որը տղամարդիկ իրենց ուսերին կրում են հասարակության մեջ մեծանալով և ինքնահաստատվելով:

Հետաքրքիր է, որ կին մասնակիցների ընկալումները շատ առումներով արտացոլում էին տղամարդկանց ընկալումները: Նրանք նկատել են, որ հասարակությունն ակնկալում է, որ տղամարդիկ ուժ մարմնավորեն, դրսևորեն ջենթլմենական վարքագիծ, պաշտպանեն որոշ հայրիշխանական արժեքներ և ստանձնեն ընտանիքին կերակրողի պատասխանատվությունը: Նաև ակնկալիք կա, որ տղամարդիկ հեղինակավոր մասնագիտություններ ունենան այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաները, իրավագիտությունը, բժշկությունը: Այնուամենայնիվ, չնայած այս լայնորեն ընդունված ակնկալիքներին, որոշ կին մասնակիցներ ընդգծել են, որ վերջին տարիներին նկատելի տեղաշարժ է տեղի ունեցել:

Որոշ կին մասնակիցներ նկատել են կանանց նկատմամբ տղամարդկանց վերաբերմունքի փոփոխություն, ինչը վկայում է կանանց և նրանց ազատությունների մասին տղամարդկանց ընկալումներում զգալի տեղաշարժի մասին: Այս փոփոխության մասին հատկապես խոսել են մարզերը ներկայացնող կանայք: Նրանք նշել են, որ տղամարդիկ ավելի հանդուրժող են դարձել կանանց նկատմամբ և սկսել են արժևորել նրանց խորհուրդներն ու առաջարկությունները, հատկապես երբ խոսքը գնում է ընտանիքին վերաբերող որոշումների և խնդիրների մասին: Ընտանիքում գենդերային դերերի և որոշումների կայացման հարցում պատկերացումների փոփոխությունը կին մասնակիցների շրջանում ակտիվ քննարկման առարկա էր: Տղամարդկանց խումբը նույնպես ընդգծել է ավանդական ակնկալիքը, որ տղամարդիկ պետք է հատկապես ընտանիքում որոշումներ կայացնելու պատասխանատվություն ստանձնեն՝ այդ պատասխանատվությունը դնելով ուղղակիորեն ընտանիքի ղեկավարի վրա, որը սովորաբար տղամարդն է: Այնուամենայնիվ, թե՛ ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած տղամարդիկ, և թե՛ կանայք խոստովանել են, որ վերջին տարիներին տեղի է ունեցել զգալի տեղաշարժ: Նրանք նշել են, որ ընտանիքում կնոջ դերը ավելի կարևորելու հետ մեկտեղ որոշումներ կայացնելը վերածվել է ամուսինների միջև համատեղ պարտականության: Կին և տղամարդ մասնակիցներն ունեին նկատելիորեն համանման ընկալումներ գենդերային դերերի վերաբերյալ:

Քննարկումներում կարևորվել է տղամարդկանց վերագրվող դերը ընտանիքում, որի շրջանակում մասնակիցները շեշտել են լավ հայր լինելու առաջնահերթ կարևորությունը, որին հաջորդում է լավ որդի և հավատարիմ ընկեր լինելը: Տղամարդկանց հետ կապված ակնկալիքները ուրվագծվել են տարբեր խմբերի քննարկումներում.

- Ծնողները ձգտում են լիարժեք կայացած որդի ունենալ՝ **հաճախ իրենց երեխաների՝ հատկապես որդիների վրա արտապատկերելով իրենց անկատար նկրտումները**՝ ձգտելով, որ նրանք կրթվեն, աշխատանքի տեղավորվեն և ընտանիքն ապահովելու կարողություն ունենան:

- **Ընկերներն** ու **հարազատները** տղամարդկանցից **հավատարմություն, աջակցություն և փոխըմբռնում են ակնկալում**:
- **Կանայք** կամ **ընկերուհիներն** ակնկալում են **նվիրվածություն, ուժ, ընտանիքի ապահովում, պաշտպանական բնազդներ, ինչպես նաև ռոմանտիկ և սիրալիր վարքագիծ**:
- **Գործատուներն** ակնկալում են **պրոֆեսիոնալիզմ, գովելի վարքագիծ և աշխատանքում դրված խնդիրների իրագործում**:
- **Մասնագիտությունից կախված անձինք**, ինչպիսիք են բժիշկների դեպքում բուժառուները կամ փրկարարների դեպքում կորած անձինք, ակնկալում են **պարտականությունները կատարելու հարցում բարձր մասնագիտական կարողություններ**՝ հանուն այլոց բարեկեցության:

Մասնակիցներն ընդգծել են, որ այս ակնկալիքները, որոնք բխում են տարբեր հասարակական կառուցակարգերից, ներառում են ինչպես ընդհանուր հասարակական օրինաչափությունները, այնպես էլ առանձին խմբերի կողմից առաջադրված հատուկ պահանջները: Հասարակության ակնկալիքները, որոնք առաջադրված են տղամարդկանց տարբեր սոցիալական միջավայրերում՝ ներառյալ ընտանիքը, ընկերները, գործընկերները և ծանոթները, պարունակում են հստակ նորմեր՝ կապված **հուզականության, առնականության, անկեղծության, հոգատարության կամ թշնամության** հետ: Այս ոլորտներում հասարակության մեջ առկա է տղամարդկանց **հուզական արտահայտումը սահմանափակելու** համատարած միտում՝ հանրային վայրերում այն համարելով անպատեհ: Այս սահմանափակումները խորապես արմատավորվում են մանուկ հասակից՝ ամրապնդելով այն համոզմունքը, որ հույզերը ցույց տալը թուլության նշան է և տղամարդկանց ոչ սազական վարքագիծ: Միևնույն ժամանակ, քննարկումների ժամանակ տղամարդ մասնակիցները նշել են, որ բանակցություններում տղամարդիկ և կանայք տարբեր մոտեցումներ են կիրառում: Նրանք նկատել են, որ տղամարդիկ հակված են բանակցելու և արտահայտելու իրենց ցանկությունները ավելի հասկանալի և ընդունելի ձևով, քան կանայք: Կանայք, նրանց կարծիքով, բանակցությունների ընթացքում ավելի հուզական են լինում՝ հավանաբար թույլ տալով, որ կրքերն ու զգացմունքները ազդեն իրենց մոտեցման վրա, ինչը կարող է խանգարել հաջող բանակցություններին: Ի հակադրություն, տղամարդիկ համարվել են հմուտ բանակցողներ, որոնք ունակ են իրենց ակնկալիքները հստակ և ճշգրիտ ներկայացնելու: Այս հմտությունը կապված է տղամարդկանց՝ իրենց հույզերն ու զգացմունքներն ավելի լավ վերահսկելու ենթադրյալ ունակության հետ. մի հատկանիշ, որը մասամբ վերագրվում է վաղ տարիքից տղամարդկանց նկատմամբ կիրառվող հուզական սահմանափակումներին: Հետաքրքրական է, որ այս սահմանափակումները համարվել են շահավետ՝ նպաստելով ապագայում տղամարդկանց՝ որոշումներ կայացնելու կարողությունների զարգացմանը:

Հասարակության ակնկալիքների և հաստատված օրինաչափությունների ազդեցությունը տղամարդկանց վրա հատկապես ընդգծվել է զբաղվածության հարցում: Մասնակիցներն ընդգծել են, որ գործատուներն ու գործընկերները հաղորդակցության և հարաբերությունների ձևավորման վրա ազդող հիմնական գործոններն են, ինչը պայմանավորված է կանխորոշված դերերով և ակնկալիքներով: Այս համատեքստում, տղամարդու կողմից ղեկավար պաշտոն զբաղեցնելը հաճախ կապվում է ենթակաների նկատմամբ իշխանության հետ, որտեղ ինքնավստահության որոշակի մակարդակը նույնացվում է բարձր պրոֆեսիոնալիզմի հետ: Կանխորոշված դերերին համապատասխանող հատուկ գործողություններն ակնհայտ են դառնում աշխատավայրում՝ ամրապնդելով վարքագծի և պահվածքի կարծրատիպային օրինաչափությունները, որոնք ակնկալվում են որոշակի պաշտոններում կամ դերերում գտնվող անձանցից: Այս միջավայրը ստեղծում է մի միջավայր, երբ հաստատված հասարակական նորմերը ամրապնդվում են, մասնավորապես՝ կապված հստակ

պաշտոններից ակնկալվող վարքագծի հետ:

Այսպիսով, ամփոփելով, ակնհայտ է դառնում, որ հասարակության ակնկալիքների հարատևման արդյունքում ձևավորվում են տղամարդկանց փորձառությունները տարբեր ոլորտներում՝ սկսած նրանց մասնագիտական ուղուց մինչև ընտանեկան դերեր և հույզերի արտահայտում: Այս արմատացած նորմերը թելադրում են այն պայմանները, որոնցով տղամարդկանցից ակնկալվում է գործել՝ ուրվագծելով աշխատանքի, ընտանեկան կյանքի և նույնիսկ հուզական վարքագծի նրանց ուղիները: Ազդեցությունը խորն է, տարածվում է աշխատավայրում հարաբերություններից մինչև բուն առնականության սահմանումը, որը ներկայացնում է հաստատված նորմերի և անձանց ինքնությունների բարդ փոխազդեցությունը: Այսպիսով, ուսումնասիրությունը վերահաստատում է, որ հայ հասարակությունը հետևում է արմատացած և բյուրեղացած ստանդարտների, որոնք թելադրում են տղամարդկանց և կանանց վերագրվող դերերն ու պարտականությունները՝ անձնային որակներից մինչև վարքագիծ, մասնագիտություններ և նույնիսկ արտաքին տեսք: Հասարակության այս ակնկալիքները շարունակաբար ձևավորում և սահմանում են այս չորս կատեգորիաների նորմերը՝ ամրապնդելով հաստատված գենդերային դերերը և հասարակության համոզմունքները:

Գենդերային հիմքով անհավասարությունը, խտրականությունը և մարտահրավերները

Գենդերային հավասարությունը և խտրականության հետ կապված խնդիրները հաճախ կապվում են կանանց նկատմամբ անարդարության հետ՝ հատկապես տնտեսական ոլորտում: Բազմաթիվ ուսումնասիրություններ և հետազոտություններ ընդգծում են աշխատուժում կանանց նկատմամբ խտրական վերաբերմունքը՝ ցույց տալով բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնելու հարցում անհավասարությունը (դրանք հիմնականում զբաղեցնում են տղամարդիկ): Այնուամենայնիվ, այս լայնածավալ տեղեկատվության պայմաններում մեդալի մյուս կողմը՝ գենդերային հիմքով անհավասարությունն ու խտրականությունը, որին բախվում են հասարակության արական սեռի ներկայացուցիչները, հաճախ անտեսվում է: Սոցիոլոգիայում կան փոքր, բայց աճող քանակությամբ աշխատություններ, որոնք վերաբերում են տղամարդկանց խնդիրներին[9]: Ելենա Էսիգը և Ռիչարդ Սոպարնոն ընդգծել են տղամարդկանց խնդիրների վերաբերյալ գրականության սակավությունն ու ցրվածությունը՝ հատկապես երբ խոսքը գնում է աշխատավայրում խնդիրների մասին: Նրանք նշել են էմպիրիկ հետազոտությունների բացակայությունը, որոնք կկենտրոնանային տղամարդկանց առջև ծառացող դժվարությունների բնույթն ու ծագումը հասկանալու վրա՝ հատկապես ղեկավար պաշտոններ զբաղեցնելու տեսանկյունից[10]:

Հաշվի առնելով վերոհիշյալ կետերը՝ ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտել թե՛ արական, թե՛ իգական սեռի մասնակիցների ընկալումները՝ կապված տղամարդկանց դաստիարակության և կայացման ընթացքում խտրականության և անարդարության հետ: Տղամարդ մասնակիցներն ընդգծել են հասարակության այն ոլորտները, որտեղ տղամարդկանց նկատմամբ տեղի է ունենում անարդարություն և խտրականություն՝ ներառյալ աշխատաշուկան, հարաբերությունները, հաղորդակցությունը, հույզերի արտահայտումը և զինվորական ծառայությունը: Ի հակադրություն, կին մասնակիցները ընդգծել են տղամարդկանց պարտադրվող հուզական սահմանափակումները և սահմանները, որոնք բխում են հասարակության և սեփական անձի կողմից առաջադրված ակնկալիքներից:

[9] Ռուդման, Լ.Ա. և Մեշեր, Կ. (2013): Ընտանեկան արձակուրդ պահանջող տղամարդկանց տուգանելը. Ճկունության խարանը կանացիությա՞ն խարան է: Սոցիալական հարցերի ամսագիր, 69 (2), 322-340
Վանդելո. Ջ.Ա., Հեթինգեր, Վ.Ի., Բոսոն, Ջ.Կ. և Սիդիքի, Ջ. (2013): Երբ հավասարն այդքան էլ հավասար չէ. Աշխատավայրում ճկունություն փնտրելու տղամարդկանց դիլեման: Սոցիալական հարցերի ամսագիր, 69 (2), 303-321

[10] Էսիգ, Ի. և Սոպարնո Ռ., (2019): Աշխատավայրում գենդերային անհավասարության վերահմաստավորում. տղամարդկանց տեսանկյունը Dans Management, հատոր 22, 373- 410

Նրանք մատնանշեցին նկատելի պարադոքս. հավասարության և անաչառության կողմնակից լինելով՝ կանայք նաև ակնկալում են, որ տղամարդիկ ուժ ցուցաբերեն, պաշտպանեն և հոգան ծախսերը:

«Տղաներից ակնկալիքների վրա հաճախ ազդում են աղջիկների նախասիրությունները, քանի որ նրանք նաև ցանկանում են ուժեղ, կարողունակ զուգընկերներ: Ես դեռ չեմ հանդիպել մի աղջկա, որը գոհ կլինի մի տղամարդուց, ով միշտ լաց է լինում, չի ցանկանում աշխատել կամ խուսափում է պարտականություններից: Այսպիսով, մենք ինչ-որ կերպ ստեղծում ենք այս հակասությունը, որը լրացուցիչ խտրականություն է առաջացնում»:

Կին մասնակից, 20-30 տարեկան, մարզային խումբ

Այս հակասությունն ամրապնդում է հակասական ակնկալիքների, պահանջների և սոցիալական վարքի բարդ և անլուծելի թվացող շրջափուլը, որը մարտահրավեր է ստեղծում տղամարդկանց համար հասարակության ներսում: Տարբեր նկատառումների հետևյալ վերլուծությունը ընդհանուր պատկերացում է տալիս տղամարդկանց առջև ծառացած մարտահրավերների և խտրականության վերաբերյալ:

Ընդհանուր հարցեր. տղամարդ մասնակիցները նկարագրել են տղամարդկանց կյանքը հասարակության մեջ որպես տարբեր մարտահրավերների և ճգնաժամերի շարունակական շրջափուլ, որոնք պետք է հաղթահարեն՝ անձնական աճ գրանցելու համար: Որոշ մասնակիցների կողմից արտահայտված այս գաղափարը համընկնում է Էրիկ Էրիքսոնի՝ մարդու զարգացման հոգեբանական տեսության հետ: Էրիքսոնն առաջ է քաշել զարգացման ութ փուլերի գաղափարը, որոնք ընդգրկում են անհատի ողջ կյանքի տևողությունը, յուրաքանչյուր փուլ ներկայացնում է հոգեսոցիալական ճգնաժամ կամ լուծում պահանջող կարևոր խնդիր: Տարիքային այս մարտահրավերները չհաղթահարելը կարող է խոչընդոտել զարգացմանը՝ հանգեցնելով լճացման չհաղթահարված փուլում և արգելակելով լիարժեք ինքնահիրացումը[11]: Էրիքսոնի տեսությունը վերաբերում է ընդհանրապես մարդկանց՝ անկախ նրանց սեռից: Այնուամենայնիվ, մասնակիցները նշել են, որ տղաներն ավելի հաճախ են բախվում մարտահրավերների վաղ տարիքից իրենց անհատականության ու անձի կայացման հարցում կյանքի տարբեր ոլորտներում՝ ներառյալ ընտանիքը, ընկերները, դպրոցը, համալսարանը, բանակը և աշխատավայրը: Առաջնորդվելով տղամարդկանց պարտադրված հասարակության ակնկալիքներով՝ նրանք անցնում են զարգացման փուլերով՝ համապատասխանաբար ձևավորելով իրենց կյանքը: Այնուամենայնիվ, այս ուղին կարող է տարբեր խնդիրներ առաջացնել տղամարդկանց համար՝ ստեղծելով հետագա խտրականության կամ որոշակի սոցիալական միջավայրից դուրս մնալու հիմք:

Աշխատանքային հարցեր. Քննարկումների տղամարդ մասնակիցներն ընդգծել են, որ գենդերային խտրականությունը, որը սովորաբար ճանաչվում է որպես սեքսիզմ, բացասաբար է անդրադառնում նաև տղամարդկանց վրա: Ծառայությունների ոլորտում գեղեցիկ արտաքինով կանանց աշխատանքի ընդունելու նախապատվությունը հաճախ դիտվում է որպես սեքսիստական մոտեցում կանանց նկատմամբ: Այնուամենայնիվ, դա ընկալվում է որպես իրական խտրականություն տղամարդկանց և տղաների նկատմամբ, ովքեր ձգտում են աշխատել սպասարկման ոլորտում՝ ենթարկվելով մերժման բացառապես իրենց սեռի պատճառով:

«Սպասարկման ոլորտում հաճախ շեշտը դրվում է բարետես աղջիկներին աշխատանքի ընդունելու վրա, ինչը արդեն համարվում է տարբերություն դնել: Այս նախապատվություն էլ չէ որ վկայում է աղջիկների և տղաների միջև գենդերային խտրականության մասին»:

Տղամարդ մասնակից, 18-35 տարեկան, մարզային խումբ

[11] Թիշոփ Չ. (2013): Զարգացման հոգեսոցիալական փուլերը: Միջմշակութային հոգեբանության հանրագիտարան (1055-1060)

Ոլորտները, որտեղ գերակշռում են տղամարդիկ, ըստ մասնակիցների, շինարարության և զինված ուժերի ոլորտներն են, որտեղ ֆիզիկական ուժն ու գաղտնապահությունը բարձր գնահատելի հատկանիշներ են: Այնուամենայնիվ, վերջին տարիներին կին ներկայացուցիչներն ավելի շատ են ներգրավվում այս աշխատանքներում՝ երբեմն նույնիսկ ավելի բարձր վարձատրվելով: Այս միտումը, ըստ մասնակիցների, ամրապնդում է իրական խտրական վերաբերմունքը տղամարդ աշխատակիցների նկատմամբ:

Կրթական հարցեր. Քննարկումների ընթացքում ընդգծվեց, որ կրթական ոլորտում կա նույնանման իրավիճակ, երբ տղամարդ ուսանողները հաճախ ավելի խտրական վերաբերմունքի են ենթարկվում՝ համեմատած իրենց կին համակուրսեցիների հետ: Նշվեց, որ նույնիսկ հավասար պայմաններում կին ուսանողները ավելի լավ գնահատականներ ստանալու միտում ունեն, քան տղամարդիկ: Այս տարբերությունը հաճախ վերագրվում է կարծրատիպերին, որոնք ենթադրում են, որ տղամարդ ուսանողները ավելի քիչ մոտիվացված կամ ոգևորված են սովորելու, թեև դա միշտ չէ, որ համապատասխանում է իրականությանը: Այդ իսկ պատճառով տղամարդ մասնակիցները նշել են, որ խտրականության են ենթարկվում նաև կրթության ոլորտում, քանի որ դասախոսների կողմից հավասար վերաբերմունքի չեն արժանանում:

Վարքագծային հարցեր. Անհատների՝ հատկապես տղամարդկանց առջև հասարակության մեջ ծառացած խտրականությունն ու մարտահրավերները վերագրվում էին զարգացման ընթացքում ձեռք բերված դաստիարակության, էթիկայի և վարքագծային նորմերի տարբեր մոտեցումներին: Քննարկումների ընթացքում ընդգծվել են այն դեպքերը, երբ համեստ և բարեկիրթ տղամարդիկ կարող են շփվելու դժվարություններ ունենալ կոպիտ և հարձակողական անձանց հետ: Որոշակի համատեքստերում համեստությունը և բարեկրթությունն ընկալվել են որպես թուլություն, ինչը հանգեցնում է հասարակության կողմից տղաներին և տղամարդկանց առաջադրվող պահանջին, որ նրանք դրսևորեն ագրեսիա և ուժ՝ հաջողության հասնելու համար: Ավելին, քննարկումների ընթացքում մատնանշվել է, որ զինծառայության ոլորտում տիրում է խտրականության ավելի բարձր մակարդակ, որտեղ զինծառայողների գերակշիռ մեծամասնությունը հայ իրականությունում արական սեռի ներկայացուցիչ է: Այս միջավայրում մրցակցությունն ու խտրականությունը գերակշռում են՝ անկախ սեռից, քանի որ արական սեռի ներկայացուցիչները պայքարում են միմյանց դեմ նույն խմբի շրջանակներում: Այստեղ անտեվսում են գենդերային առանձնահատկությունները՝ նպաստելով այնպիսի միջավայրի, որտեղ խտրականությունն ու մրցակցությունը ռազմական համատեքստում սովորական երևույթ են դառնում: Նման պայմաններում մարդու վարքագծի առանձնահատկությունները դառնում են իրական մարտահրավեր և խոչընդոտում հավասար հաղորդակցությանը և հնարավորություններին:

Հուզական հարցեր. Քննարկումների և՛ տղամարդ, և՛ կին մասնակիցները ընդգծել են տղամարդկանց վրա դրված հուզական սահմանափակումները՝ որպես անարդարության արտահայտման ձև: Դրանք, խորապես արմատավորված լինելով հայկական մշակութային հայացքներում, երիտասարդ տարիքից տղաների մեջ սերմանում են հուզական սահմանափակումներ՝ ակնկալելով, որ նրանք դրսևորեն քաջություն և առնականություն՝ միաժամանակ ճնշելով հույզերի արտահայտումը: Երկու սեռերն էլ իրենց քննարկումներում ընդգծել են այս անարդարությունը: Այնուամենայնիվ, տղամարդ մասնակիցները նկատել են հուզական սահմանների փոփոխությունը հասարակության ընկալումներում՝ հատկապես 2020 թվականի պատերազմից հետո, երբ լացն ավելի ընդունված է դարձել տղամարդկանց շրջանում: Չնայած հուզական արտահայտման և լաց լինելու ընդունելիությանը, մասնակիցները խոստովանել են, որ դեռևս կան սոցիալական սահմանափակումներ այն հարցում, թե որտեղ և ում հետ են նրանք ազատ զգում ցույց տալ իրենց խոցելիությունը: Նրանք նշել են, որ պատրաստ են բաց արտահայտել հույզերը, մասնավորապես՝ լաց լինելը այնպիսի մարդկանց առջև, ինչպիսիք են մայրերը, քույրերը և իգական սեռի ներկայացուցիչները, որոնք

տալիս են որոշակի մխիթարություն՝ ցուցաբերելով խոցելիություն այս վստահելի անձանց մոտ: Միևնույն ժամանակ, քննարկումները ցույց տվեցին, որ հույզեր արտահայտելու պատրաստակամությունը և լաց լինելը թելադրված չեն միայն կարծրատիպերով կամ հասարակական նորմերով, այլ նաև կախված են անհատի անձնային հատկանիշներից: Անկախ սեռից՝ անհատները կարող են ունենալ տարբեր աստիճանի հուզական ամրություն կամ խոցելիություն, որն ազդում է նրանց հույզերի արտահայտման վրա: Խնդիրն առաջանում է, երբ խեղդող հույզեր ապրող տղամարդիկ հասարակության կողմից ճնշման են ենթարկվում զսպելու իրենց հույզերը, իսկ հուզական կայունություն դրսևորող կանայք կարող են ընկալվել որպես զուսպ անհատներ, որոնք թաքցնում են իրենց հույզերը՝ ուժեղ երևալու համար: Այս երկակի կարծրատիպերը ամրապնդում են փոխադարձ ակնկալիքների միջավայրը, որը խանգարում է անձի կողմից իր զգացմունքների իրական արտահայտմանը:

Մյուս կողմից, կին մասնակիցները նաև հայտնել են տղամարդկանց հուզական արտահայտման ընկալման փոփոխության մասին, որը մեծապես ազդեցություն է կրել կանանց շրջանում վերաբերմունքի փոփոխություններից և սերնդափոխությունից: Նրանք ընդգծել են իրենց դերն այս փոփոխության հարցում՝ այլ վերաբերմունք դրսևորելով հուզական արտահայտման նկատմամբ՝ մասնավորապես, թե ինչպես են նրանք շփվում իրենց եղբայրների, տղամարդ ընկերների հետ և դաստիարակում իրենց երեխաներին: Այս կանայք նշել են, որ խրախուսում են իրենց երեխաներին՝ ներառյալ իրենց որդիներին, բացահայտորեն ցույց տալ իրենց զգացմունքներն ու հույզերը՝ այլևս չդիտելով նման դրսևորումները որպես թուլության կամ խոցելիության նշան: Վերաբերմունքի այս փոփոխությունը տղամարդկանց շրջանում առավել ընկալունակ միջավայր է ստեղծում հույզերի արտահայտման համար:

> *«Կարծում եմ, որ դա բխում է մեզանից՝ այն գաղափարից, որ աղջիկները հասկանում են, որ լաց լինելն ընդունելի է և դրա մեջ ամոթ բան չկա: Այս փոփոխության պատճառը, գուցե, այն է, որ աղջիկները բացահայտորեն քննարկում են, որ լաց լինելը նորմալ է և ամաչելու բան չկա»:*
>
> *Կին մասնակից, 20-30 տարեկան, մարզային խումբ*

Տղամարդկանց լաց լինելն ավելի քիչ է խարանվում, հատկապես երբ փոխվել են դաստիարակության ժամանակակից մոտեցումները: Տղամարդիկ ավելու ու ավելի ազատորեն են արտահայտում իրենց հույզերը և բարձրաձայնում լաց լինելու իրենց կարիքի մասին՝ շեղվելով զգացմունքները թաքցնելու ավանդական ակնկալիքից:

> *«Փոքր տարիքից մեզ սովորեցրել են լաց չլինել. դա համարվում էր ամոթալի, աղջիկներին վերապահված մի բան... Նպատակ կար ընդգծել տարբերությունը՝ շեշտելով, որ տղաները պետք է պինդ լինեն: Սակայն լացը հույզերի բնական արտահայտումն է՝ ճնշումից ազատվելու և հանգստանալու միջոց: Անձամբ ես չեմ հիշում, թե երբ եմ լաց եղել. փոխարենը, ես հակված եմ խեղդելու այն ներսում: Միգուցե դա լավագույն լուծումը չէ, բայց ես այդպես եմ վարվել»:* *Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, մարզային խումբ*
>
> *«Իմ կարծիքով, լացը բնական երևույթ է, որը նպաստում է հոգեկան կայունությանը»:*
>
> *Տղամարդ մասնակից, 26-35, Երևանի խումբ*
>
> *«Իմ կարծիքով, լացը ռեֆլեքս է, որը դուրս է մարդու վերահսկողությունից: Երբ լաց լինելու ցանկություն է առաջանում, մարդը կարող է ընտրել հետ քաշվել կամ առանձին լաց լինել, սակայն արցունքները միևնույն է հոսում են: Տարբերությունն այն է, որ այսօր լացն ավելի ընդունելի և ընկալելի է, իսկ նախկինում նման ընդունումը կամ ընկալունակությունն ավելի քիչ էր տարածված»:*
>
> *Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, Երևանի խումբ*

Կին մասնակիցները նաև ընդգծել են վերջին տարիներին իրենց նկատած փոփոխությունները՝ նշելով տղամարդկանց աճող պատրաստակամությունը՝ բաց արտահայտելու իրենց հույզերն ու զգացմունքները՝ առանց ծաղրի կամ բուլինգի ենթարկվելու վախի: Նրանք այս փոփոխությունը կապել են ընկալումների և տեղեկատվության ընդհանուր փոփոխությունների հետ, որոնք տարածված են նոր սերնդի շրջանում: Իրենք՝ կանայք, ավելի հաստատակամ են դարձել իրենց կարծիքներն ու ցանկություններն արտահայտելու հարցում, ինչը հանգեցնում է այն ակնկալիքին, որ տղամարդիկ ևս ավելի բաց և վստահ կերպով արտահայտեն իրենց զգացմունքները:

«Նախկինում տղամարդիկ հաճախ պատրաստ չէին քննարկումների մեջ մտնելու թե՛ եղբայր-քույր, և թե՛ ամուսին-կին հարաբերություններում: Այնուամենայնիվ, իմ նկատածից և անձնական փորձից ելնելով, կանանց քաջալերումը էական դեր է խաղացել այս փոփոխության հարցում: Նախկինում տղամարդիկ մերժում էին նման խոսակցությունները՝ ավելի հեշտ համարելով հրաժարվելը, քան բացվելը կամ հասկանալ փորձելը: Հիմա դրական տեղաշարժ կա. տղամարդիկ ավելի ու ավելի պատրաստակամորեն են արտահայտվում, ինչը գովելի փոփոխություն է»:

Կին մասնակից, 20-30 տարեկան, մարզային խումբ

Տղամարդու հուզական արտահայտման մակարդակի հետ կապված ակնկալիքների վերոհիշյալ փոփոխությունները ցույց են տալիս, որ նկատված մարտահրավերներն իսկապես կարող են փոխվել: Չկան այնքան ամրապնդված կարծրատիպեր, որ հնարավոր չլինի կոտրել կամ փոփոխել. անհրաժեշտ է միայն փոփոխություններ կատարելու պատրաստակամություն:

Ձգտումներ. Տղամարդկանց երազանքներն ու ձգտումները և դրանց իրականացման խոչընդոտները քննարկելիս տղամարդ մասնակիցների մեծամասնությունը նշել է, որ տեղի է ունենում փոխակերպման գործընթաց. այն, ինչ ընկալվում է որպես ձգտում կամ երազանք, դառնում է նպատակ, որին պետք է հետամուտ լինել: Նրանք հակված են խույս տալու զգացմունքներից՝ ձգտելով շոշափելիորեն իրագործել իրենց ձգտումները՝ իրական ջանքեր գործադրելով երազանքներն իրականություն դարձնելու հարցում: Այս պրագմատիկ մոտեցումը հաճախ տղամարդու ձգտումների իրագործումը դարձնում է իրատեսական՝ քիչ տեղ թողնելով չիրականացված երազանքների համար: Մասնակիցները կարևորել են նպատակասլացությունը՝ որպես տղամարդկանց հիմնական հատկանիշ՝ իրենց նպատակներին հասնելու համար: Այնուամենայնիվ, ի հայտ է եկել տարբերություն ձգտումների և նպատակների միջև. նպատակներն ընկալվում են որպես իրագործման ենթակա ջանքերի և նվիրումի միջոցով, մինչդեռ ձգտումները կամ երազանքները դիտվում են որպես հեռավոր և խոչընդոտներով լեցուն: Այնուամենայնիվ, ձգտումները բաժանելով ավելի փոքր, իրագործելի նպատակների, դրանք վերածվում են վերջնանպատակի, որը պետք է իրագործվի որոշակի ժամկետում:

«Հաճախ ասում են, որ յուրաքանչյուր անձ, անկախ սեռից, պետք է ունենա մեծ երազանք կամ կյանքի նշանակալի նպատակ, որին պետք է հետամուտ լինի՝ այն բաժանելով ավելի փոքր հանգրվանների: Ինչո՞ւ մարդը չի կարող երազանք ունենալ, հավանաբար մենք դա որակում ենք որպես նպատակ՝ ինչ-որ բան, որը նրանք հիմա պատկերացնում են, բայց թվում է անհավանական: Սակայն քայլ առ քայլ դա դառնում է հասանելի, թեև կարող է ժամանակ պահանջել:

Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, մարզային խումբ

Միևնույն ժամանակ բոլորն ընդունել են, որ մարդու նպատակներն ու երազանքները զգալիորեն տարբերվում են՝ կախված տարիքից: Ավելի մեծ տարիքի մարդիկ հակված են ավելի իմաստուն և իրատեսական ձգտումներ ունենալու, մինչդեռ երիտասարդները հաճախ անհավատալի բարձր նպատակներ են դնում իրենց առջև: Ֆինանսական կայունությունը համարվել է ամենահիրատեսական և ակնառու նպատակներից մեկը, որը պարտադրված է հասարակության յուրաքանչյուր տղամարդ անդամի վրա: Այս անհրաժեշտությունը հաճախ ստիպում է տղամարդկանց ավելի շուտ աշխատաշուկա մտնել, քան կանայք: Ինչ վերաբերում է միջազգային ճանաչում ունեցող ընկերություններում աշխատելու ձգտումներին, ինչպիսիք են NASA-ն կամ Google-ը, մասնակիցների կողմից նշվել է նման երազանքներին հասնելու թվացյալ անհնարինության գիտակցումը՝ հատկապես հաշվի առնելով ծննդավայրը և հնարավորությունների սահմանափակումները, որոնք կարող էին իրենց մոտեցնել այս ձգտումներին:

Խնդիրների լուծման և հաղթահարման մեխանիզմներ

Հասարակության ներսում տղամարդկանց առջև ծառացած մարտահրավերների և դրանց տարբեր միջավայրերի մասին խոսելիս մասնակիցները նշել են, որ դրանք բազմակողմանի են՝ ընդգրկելով անձնական, հարաբերությունների և սոցիալական ոլորտները: Նրանք նկարագրել են դժվարությունները, որոնք կապված են հասարակության ակնկալիքների և խտրականության հետ՝ ներառյալ ինքնահիրացման խնդիրները, լարված ընտանեկան հարաբերությունները, միջսեռային ընկերությունների սահմանափակումները, աշխատաշուկայի կատաղի մրցակցությունը, որը սահմանափակում է հնարավորությունները, կրթության վրա ազդող ֆինանսական սահմանափակումները և պետության՝ հակամարտություններից բխող անվտանգային պարտավորությունների բեռը: Տղամարդ մասնակիցները մտահոգություն են հայտնել իրենց կրթության սկզբում աշխատել սկսելու վերաբերյալ՝ ի տարբերություն կին մասնակիցների, որոնք ավելի ուշ են ներգրավվում աշխատաշուկայում, ինչը հավանաբար կրճատում է երիտասարդ տղամարդկանց կրթական ուղին՝ սահմանափակելով ամբողջական ուսումնական շրջափուլով անցնելու հնարավորությունները, քանի որ նրանք ստիպված են առաջնահերթություն տալ գումար վաստակելուն: Այս մարտահրավերները, որոնք քննարկել են տղամարդ մասնակիցները, կրկնվել են կանանց հայտնած կարծիքներում՝ լույս սփռելով հաճախ անտեսանելի ծանրությունների վրա, որոնք կրում են երիտասարդ տղամարդիկ՝ փորձելով իրենց ուղին հարթել այս հատվող ճնշումների ու հասարակության ակնկալիքների պայմաններում: Այլ կերպ ասած՝ տղամարդ ուսանողները սկսում են աշխատել ուսումնառության առաջին իսկ տարիներից, իսկ կանայք աշխատանքի են անցնում իրենց կրթության ուշ փուլերում: Արդյունքում երիտասարդները զրկվում են լիարժեք կրթություն ստանալու իրավունքից՝ փոխարենը ստիպված լինելով գումար վաստակելու համար աշխատել:

Մասնակիցները նշել են, որ հասարակության արական սեռի անդամները աջակցություն են հայցում տարբեր վստահելի անձանցից՝ կախված խնդրի բնույթից և մասշտաբից: Մայրերը, քույրերը, եղբայրները և ընկերները՝ ինչպես կին, այնպես էլ տղամարդ, հիշատակվել են որպես հիմնական վստահելի անձինք: Տղամարդ ընկերներն ու եղբայրները նախընտրելի էին ընդհանուր խնդիրների դեպքում, իսկ կանայք՝ հատկապես հարաբերությունների կամ հուզական մարտահրավերների հետ կապված հարցերի դեպքում: Հետաքրքրական է, որ հայրերն ավելի քիչ են հիշատակվում՝ հատկապես մարզային համայնքներում, ինչը ենթադրում է ավելի ֆորմալ և ավելի թույլ հուզական կապ ներառող հարաբերություններ՝ համեմատած մայրերի հետ: Հաղորդվել է, որ հայրերի հետ քննարկումները հաճախ պտտվում են ոչ թե ինքնահիրացման կամ ինքնավստահության հարցերի շուրջ, այլ կարիերայի ընտրության և աշխատանքի:

Ի հակադրություն, կին մասնակիցները բնութագրել են տղամարդկանց մոտեցումը աջակցություն հայցելու հարցում՝ որպես «ես ինքս գլուխ կհանեմ»՝ ընդգծելով տղամարդկանց՝ իրենց խնդիրները ինքնուրույն, ընթացքում քիչ մարդկանց ներգրավելով լուծելու միտումը: Նրանք նշել են, որ եթե այս ինքնուրույն մոտեցումը ձախողվում է, տղամարդիկ ավելի շատ հակված են լինում ընկերներից աջակցություն հայցելու, քան ծնողներից: Կին հարցվողները համաձայնել են, որ տղամարդկանց շրջանում աջակցություն հայցելու չափը մեծապես կախված է նրանց տարիքից և կարգավիճակից: Երիտասարդ տղամարդիկ ավելի հաճախ են հակված աջակցություն հայցելու՝ հիմնականում իրենց ծնողներից՝ հատկապես մայրերից: Երբ տղամարդիկ մեծանում են, նրանք հակված են ավելի ինքնուրույն դառնալու խնդիրների լուծման հարցում: Այս դիտարկումները կրկնել են տղամարդ մասնակիցները՝ ցույց տալով, որ այս վարքագծային օրինաչափությունները խորապես արմատացած են հասարակության մեջ և հեշտ ճանաչելի են տարբեր խմբերում:

Այսպիսով, հասարակության արական սեռի անդամների վստահության շրջափուլը կարելի է նկարագրել այս պարզ դիագրամի միջոցով

Պատկեր 2. Խնդիրների լուծման հարցում վստահության շրջափուլ



Մոխրագույն	Ինքս գլուխ կհանեմ
Կարմիր	Ընդհանուր հարցեր
Կանաչ	Կարիերա, ապագա ձգտումներ, ծրագրեր
Նարնջագույն	Հրատապ աջակցություն
Դեղին	Հարաբերություններ, հուզական հարցեր
Կապույտ	Մասնագիտական և կրթական հարցեր
Մանուշակագույն	Այլ հարցեր

Դիագրամը ցույց է տալիս փոխկապակցված մարտահրավերները, որոնց բախվում են հասարակության արական սեռի անդամները ժամանակի ընթացքում և ցույց է տալիս, թե ում են նրանք հակված վստահելու աջակցություն հայցելիս: Թեև դիագրամում հիմնական հարցերը պարզեցված են, սակայն այն ընդգծում է դրանց նշանակալի փոխկապակցվածությունը: Բացի այդ, և՛ մարտահրավերները, և՛ աջակցության համար ընտրվող անձինք կարող են հեշտությամբ փոփոխվել՝ ելնելով հատուկ կարիքներից, քանի որ անհատները վստահություն և կարողություն են ունենում աջակցություն ցուցաբերելու որոշակի հարցերում: Այս շրջափուլի շրջանակներում կարևոր տարրը կենտրոնական մոխրագույն շրջանն է, որը ցույց է տալիս անհատի հակվածությունը ինքնուրույն լուծելու իրենց խնդիրները՝ առանց արտաքին աջակցություն հայցելու: Այս խնդիրը հատկապես մատնանշվել է տղամարդ մասնակիցների հետ քննարկումների ժամանակ՝ ընդգծելով նրանց վստահությունը մարտահրավերները ինքնուրույն հաղթահարելու հարցում: Որոշ մասնակիցներ ընդգծել են հատուկ ոլորտներում մասնագետների նշանակությունը՝ նախընտրելով օգնություն հայցել այն անձանցից, ովքեր մասնագիտացած են իրենց առջև ծառացած խնդիրների լուծման գործում: Այս թիրախային մոտեցումն ընդգծվել է որպես ավելի առարկայական և արդյունավետ՝ նրանց կարիքներին համապատասխան օգնություն ցուցաբերելու համար:

Հետազոտությունը ցույց տվեց, որ տղամարդկանց շրջանում կա հետևողական միտում, որը ցույց է տալիս հակվածություն դեպի ինքնուրույնություն իրենց հարցերը լուծելու հարցում՝ միաժամանակ բացահայտելով անհատների որոշակի խումբ, որոնց հակված են դիմելու անհրաժեշտության դեպքում: Այս օրինաչափությունը նկատվել է նաև կին մասնակիցների պատասխաններում, ինչը նշանակում է, որ տղամարդկանց նկատմամբ կիրառվում է խնդիրների լուծման հարցում վարքագծի սոցիալապես ընդունված նորմ: Այս նորմն ընկալվում է որպես սովորական երևույթ ոչ միայն հենց տղամարդկանց, այլև հասարակության իգական սեռի ներկայացուցիչների կողմից:

Առողջական խնդիրներ

Ինչպես ընդգծված է հետազոտության խնդրի նկարագրության մեջ, տղամարդիկ հաճախ դժկամությամբ են բժշկական օգնության դիմում և նախընտրում են խնդիրները լուծել ինքնուրույն: Սա միտում է, որը հաստատվում է տղամարդ մասնակիցների հետ քննարկումներում: Մասնավորապես, տղամարդկանց առողջական խնդիրների և դիմելու ենթակա մասնագետների մասին քննարկումներում ի հայտ են եկել ուշագրավ հարցեր: Մասնակիցներն ընդգծել են բնակչության սահմանափակ իրազեկվածությունը այն մասին, թե որտեղ օգնության դիմել կոնկրետ առողջական խնդիրների դեպքում: Ավելին, հասակակիցների խմբերի միջև շրջանառվող ապատեղեկատվությունը նպաստում է անհապաղ բժշկական օգնության կարևորության թերագնահատմանը, ինչը հանգեցնում է առողջության վատթարացման և համապատասխան հետևանքների:

> *«Եղել են դեպքեր, երբ տղաները/տղամարդիկ ունեցել են սեռական օրգանների հետ կապված խնդիրներ, սակայն ամաչել են դիմել ուրոլոգի օգնությանը: Այս դժկամությունը կարող է նպաստել ծնելիության նվազմանը: Մեր օրերում զույգերի շրջանում անպտղության խնդիրների աճ է նկատվում: Շատ մարդիկ ձեռնպահ են մնում բժշկական խորհրդատվություն ստանալուց ապատեղեկատվության պատճառով՝ խուսափելով բժիշկներին ժամանակին այցելելուց և երկար ժամանակ պահպանելով անառողջ սննդային սովորությունները: Սրա հետևանքով բազմաթիվ զույգեր հղիանալու երկարատև դժվարություններ են ունենում»:*

Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, մարզային խումբ

Սա հատկապես նկատելի էր տղամարդկանց սեռական առողջության խնդիրների վերաբերյալ քննարկումներում, որոնք վերագրվում էին սեռական հարաբերությունների վերաբերյալ կարծրատիպային և արմատացած հասարակական նորմերին: Այս նորմերը միտում ունեն սահմանափակելու կանանց սեռական ազատությունը՝ միաժամանակ տղամարդկանց ավելի լայն հնարավորություն տալով, ինչը հանգեցնում է նրան, որ տղամարդիկ սեռական առողջության հետ կապված զգալիորեն ավելի շատ խնդիրներ են ունենում, քան կանայք: Այնուամենայնիվ, հասարակական սահմանափակումները նաև խոչընդոտում են այս խնդիրների ժամանակին բուժմանը, քանի որ և՛ տղամարդիկ, և՛ կանայք ամաչում են քննարկել սեռական առողջության հարցերը՝ հատկապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները՝ հաճախ խուսափելով բժշկական խորհրդատվությունից, մինչև իրավիճակը դառնա անտանելի:

«Այո, լուրջ խնդիր կա, որ մարդիկ տատանվում են օգնություն խնդրելու, հետազոտություններ անցնելու և բուժում ստանալու հարցում, հատկապես այս երկու մասնագետների [ուրոլոգների և սեքսապաթոլոգների] դեպքում: Ցավոք, շատ քչերն են դիմում օգնության, քանի դեռ իրավիճակը չի դառնում կրիտիկական՝ հաճախ սպասելով այնքան, որ շատ ուշ է լինում: Հիվանդություններ, ինչպիսիք են սեռական օրգանների քաղցկեղը, լինի դա շագանակագեղձի կամ այլ օրգանի, հաճախ առաջանում են բժշկական օգնության դիմելու ուշացումների պատճառով: Ավելի թեթև խնդիրները անտեսվում են, իսկ մասնագետի հետ խորհրդակցելը ձգձգվում է, ինչը հետագայում ավելի ծանր բարդություններ է առաջացնում»:

Տղամարդ մասնակից, 25-34 տարեկան, մարզային խումբ

Հետաքրքրիր է, որ 18-25 տարեկան երիտասարդ մասնակիցների շրջանում ուշագրավ մի օրինաչափություն է ի հայտ եկել՝ կապված բժիշկների՝ մասնավորապես ուրոլոգների սեռի հետ, որը ընկալվում է որպես բժշկական խորհրդատվության դիմող տղամարդկանց համար զգալի խոչընդոտ: Այս դիտարկումն արվել է մի քանի մասնակիցների կողմից, ովքեր մտաբերել են, որ հասակակիցները ամաչում էին սեռական առողջության ստուգման նպատակով կին բժիշկներին այցելելուց՝ հատկապես զինվորական ծառայության համար բժշկական զննումների ժամանակ: Բացի այդ, երբ քննարկում էին տղամարդկանց՝ բժշկական զննումների գնալու պատրաստակամությունը, մասնակիցները նախապատվությունը տվել են ծանոթ բժշկին կամ իրենց ընտանիքից որևէ մեկին, ով ունի բժշկական գիտելիքներ, այլ ոչ թե կոնկրետ մասնագետին դիմելուն: Այս միտումն արտացոլում է առողջապահական համակարգի նկատմամբ անվստահության մակարդակը: Որոշ մասնակիցներ մտահոգություն են հայտնել այն մասին, որ բժիշկները խորհուրդ են տալիս անհարկի հետազոտություններ կամ բուժումներ կատարել բուժառուների շրջանում տեղեկացվածության պակասի պատճառով, որը հավանաբար պայմանավորված է ֆինանսական դրդապատճառներով:

Առողջական խնդիրների շարքում, որոնք վերաբերում են հատկապես տղամարդկանց, մասնակիցները կարևորել են ֆիզիկական սթրեսը, ողնաշարի հետ կապված խնդիրները, թոքերի և ստամոքսի քաղցկեղը և սրտի հիվանդությունները: Հատկապես թոքերի քաղցկեղը նկարագրվել է որպես տղամարդկանց շրջանում ավելի տարածված հիվանդություն՝ վաղ տարիքից և հաճախակի ծխելու սովորությունների պատճառով, չնայած կա նաև ընդունում, որ մեր օրերում կանայք նույնքան հաճախ են ծխում, որքան տղամարդիկ: Մասնակիցները քննարկել են, թե ինչպես են հասարակության ակնկալիքները հաճախ ստիպում տղամարդկանց ծխել՝ չծխելը համարելով աննորմալ: Նմանապես, ալկոհոլի օգտագործման հետ կապված հասարակական նորմերը տղամարդկանց ստիպում են խմել հավաքույթների կամ սոցիալական առիթների ժամանակ: Հետևաբար, հասարակական այս կարծրատիպերն ու ակնկալիքները նպաստում են առողջական խնդիրների առաջացմանը՝ խրախուսելով վարքագիծ, որը կարող է զգալիորեն վնասել տղամարդկանց առողջությանը:

Հոգեկան առողջության խնդիրներ. Հոգեկան առողջության հարցերով հոգեբաններին դիմելու հետ կապված քննարկումների ժամանակ զարմանալի էր նկատել, որ տղամարդ մասնակիցների մեծամասնությունը դրական արձագանքեց: Ինչպես համաձայնում են Երևանի մասնակիցները, հոգեբանի հետ խորհրդակցելու գաղափարը նախկինում համարվում էր աննորմալ հայ տղամարդկանց համար, ինչը կարող էր հանգեցնել սոցիալական օստրակիզմի: Այնուամենայնիվ, վերջերս դրական տեղաշարժ է նկատվել այս ընկալման մեջ, ինչը վերագրվում է հետպատերազմյան շրջանին, երբ շատ զինծառայողներ հոգեբանական վերականգնողական փուլ անցան: Հոգեբանների օգնությանը դիմելը այժմ ընդհանուր առմամբ համարվում է տղամարդու սովորական կարիք: Այնուամենայնիվ, երբ խոսքը վերաբերում էր իրենց անձնական իրավիճակներին, մասնակիցների մեծ մասն ասել է, որ հոգեբանական օգնության կարիք չի զգում՝ համարելով, որ իրենց հոգեկան առողջությունը կայուն է:

Մարզային համայնքների տղամարդկանց հետ քննարկումների ժամանակ հետաքրքիր օրինաչափություն է ի հայտ եկել, որն ընդգծում է հասարակական ընկալման խնդիրը, ըստ որի հոգեբաններին այցելելը կապվում է հոգեկան խնդիրների կամ խանգարումների հետ: Նրանք նշել են դեպքեր, երբ մարդկանց՝ անկախ իրենց սեռից, պիտակավորել են որպես «հոգեկան», երբ իմացել են, որ վերջիններս մասնակցում են հոգեբանական սեանսների: Այս խնդիրը կրկնել են մայրաքաղաքի տղամարդ ներկայացուցիչները, ովքեր նկատել են, որ նոր և ավագ սերունդների միջև կան ընկալման զգալի տարբերություններ: Ավագ սերունդը հաճախ շփոթում է հոգեբաններին և հոգեբույժներին՝ հոգեբանների այցելությունները համարելով հոգեբուժական բուժում, ինչը հանգեցնում է այն ընկալմանը, որ անձը հոգեկան կամ հոգեբանական հիվանդություն ունի: Ինչպես նշվեց քննարկումների ժամանակ, հոգեբանների աշխատանքը կարող է դժվար լինել: Մշտապես լսելը և կարեկցական աջակցություն տրամադրելը հեշտ բան չէ: Երևանի որոշ մասնակիցներ նկատել են, որ հոգեբաններին վստահվող տեղեկատվությունը կարող է այնքան նրանց ծանրաբեռնել, որ իրենք իսկ աջակցության կարիք ունենան: Հայ իրականության մեջ, սակայն, հոգեբանների համար բավարար հնարավորություններ չկան իրենց սթրեսը հաղթահելու համար, ինչը հանգեցնում է մասնագիտական այրման: Այս իրավիճակը ազդում է բուժառուների հետ նրանց շփման վրա՝ գուցե այդ շփումները դարձնելով պակաս արդյունավետ և մարդկանց ետ կանգնեցնելով օգնության դիմելու մտքից:

Միևնույն ժամանակ, մասնակիցների կողմից օգտագործված տերմինաբանությունը ցույց է տվել, որ նրանք նույնպես ազդեցություն են կրել գոյություն ունեցող կարծրատիպային գաղափարներից և նրանք նույնպես չեն կարողանում հստակ տարբերակել հոգեբանական և հոգեբուժական օգնություն ստացող բուժառուների միջև: Իրենց խոսքում նրանք օգտագործել են «խելագար» տերմինը, երբ նկարագրում էին հոգեբանի այցելող մեկին: Որոշ մասնակիցներ, ովքեր հոգեբաններին այցելելու փորձ ունեն, կարծում էին, որ իրենք հոգեբանության մասին ավելի լավ պատկերացումներ ունեն, քան այն մասնագետները, որոնց նրանք դիմել են՝ ընդգծելով այն փաստը, որ շփման առաջին 5 րոպեներից հետո թվում էր, թե իրենք են հոգեբանը, իսկ մասնագետները՝ բուժառուները (իրենց բառերով՝ «խելագար»): Այս վարքը, որը հատկապես նկատել են մարզային համայնքների տղամարդ մասնակիցները, հանգեցրել է հոգեբաններին այցելելուց խուսափելուն: Նրանք պատճառներ են բերել արդարացնելու այս խուսափումը՝ հավանաբար նպատակ ունենալով քողարկել խորքային պատճառը՝ վախը ենթարկվելու խարանի և դատողական վերաբերմունքի համայնքի անդամների կողմից: Միևնույն ժամանակ, նրանք դրական վերաբերմունք են հայտնել այլ անձանց նկատմամբ, ովքեր այցելում են հոգեբանի, եթե դրա կարիքը լինում է:

«Հոգեբանի մոտ չեմ գնա, եթե խնդիր ունենամ: Չգիտեմ՝ ինչու: Միգուցե կարծում եմ, որ խնդիրը չի լուծվի, կամ իրականում չեմ կարող ասել, թե ինչու: Բայց ես չեմ գնա: Ես նույնիսկ չեմ մտածի հոգեբանի մոտ գնալու մասին: Ես կարող եմ ընկերոջս առաջարկել գնալ, բայց ես ինքս չեմ գնա»:

Տղամարդ մասնակից, 18-34 տարեկան, մարզային խումբ

«Ես ունեցել եմ պահեր, երբ մտածել եմ հոգեբանին դիմելու մասին, և նման մտքերը դեռ առաջանում են: Բայց չգիտես՝ ինչու դեռ չեմ գնացել այդ քայլին: Դա գուցե կապ ունի անձնական տարածքի հետ. վարանում եմ անծանոթի հետ այնպիսի բանով կիսվելու հարցում, որը ես չէի պատմի հարազատիս: Հուսով եմ, որ երբևէ կհաղթահարեմ այս վարանումը, քանի որ օգնության դիմելը, նույնիսկ եթե դա համարվում է թուլության նշան, կարևոր է մեր բարեկեցության համար: Մեր հոգեկան առողջության անտեսումը կարող է հանգեցնել բարդ հետևանքների, որոնք շատ առումներով ազդում են մեզ վրա»:

Տղամարդ մասնակից, 26-34 տարեկան, Երևանի խումբ

Սա ևս մեկ անգամ վկայում է թերհաղորդակցության, անտեղյակության և անհավատության խորը արմատացած խնդիրների մասին, որոնք առկա են հոգեբանական և ընդհանրապես բժշկական օգնության ոլորտում: Արդյունքներն ապացուցում են, որ բժշկին կամ հոգեբանին դիմելը մեր հասարակությունում լայնորեն ընդունված չէ: Փոխարենը, մարդիկ հաճախ դիմում են իրենց հարազատների կամ ծանոթների օգնությանը: Սակայն բացառապես հարազատների վրա հենվելով միշտ չէ, որ հնարավոր է ճիշտ խորհուրդ կամ օգնություն ստանալ, քանի որ մասնագետներն այլ տեսակետներ են հայտնում, որը հարազատները կարող են չհայտնել: Այնուամենայնիվ, հասարակության մեջ՝ հատկապես արական սեռի բնակչության շրջանում նկատված դրական տեղաշարժը հուսադրող է և ապագայում ավելի լավ ու հանդուրժող հասարակություն ունենալու հույս է ներշնչում:

Լավ հոր մասին ընկալումները

Լավ հոր մասին ընկալումները տարբեր են եղել տարբեր սերունդների և մշակույթների միջև: Մինչև 1970-ական թվականները հայրերի դերն իրենց երեխաների զարգացման մեջ այնքան էլ ուսումնասիրված չէր: Նրանց ամենակարևոր աշխատանքը համարվում էր մորը տնտեսապես աջակցելը, որն իր հերթին դառնում էր երեխայի հուզական հենարանը: Այնուամենայնիվ, մեր օրերում նկատելի տեղաշարժ կա. ըստ այդմ, շատ հայրերի դիտարկում և բնութագրում են որպես զգայուն, ներգրավված և խնամքի հարցում ակտիվ մասնակից: Աճող թվով հետազոտություններ փոխակերպում են մեր ըմբռնումն առ այն, թե ինչպես նրանք կարող են ի սկզբանե ձևավորել իրենց երեխաների կյանքը՝ վիճարկելով ծնող լինելու և գենդերի մասին ավանդական գաղափարները[12]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մայր չհանդիսացող խնամակալները, հատկապես հայրերը, էապես ազդում են երեխաների վարքի, երջանկության և ճանաչողական զարգացման վրա: Պալկովիցը «լավ հայրության» գաղափարը նկարագրում է որպես եռատարր՝ հարաբերությունը (օրինակ՝ հոգատարություն և սեր), դերը (օրինակ՝ կարիքները հոգացող, ինչպիսիք են՝ տնտեսական, սահմանների հաստատում և աջակցություն), և անհատականությունը (օրինակ՝ համբերատար և նվիրված)[13]:

[12]Հարդաք Ս. (2019): Լավ հայր լինելու գաղտնիքը, BBC-ի հոդված, հրապարակվել է առցանց 12.07.2019թ.
[13]Պալկովից, Ռ. (2002): Ներգրավված հայրություն և չափահասության տարիքում տղամարդու զարգացումը. Պայմանական հավասարակշռումներ: Մահվա, Նյու Ջերսի: Lawrence Erlbaum Associates, Inc.

Թիրախային խմբերի քննարկումների արդյունքում բացահայտվել է զգալի նմանություն Պալկովիցի նկարագրած երեք տարրերի հետ: Իրականում, ինչպես տղամարդ, այնպես էլ կին մասնակիցների քննարկումների ընթացքում ընդգծվել է լավ հայր լինելու բարդությունը՝ շեշտադրելով երեխաների հետ հուզական կապ հաստատելու կարևորությունը՝ անկախ նրանց սեռից: Ըստ ընկալումների՝ հոր կողմից իրենց երեխաների նկատմամբ սիրո արտահայտման վրա ազդում են տարբեր գործոններ, ինչպիսիք են՝ երեխաների տարիքը, սեռը և ինչպես հոր, այնպես էլ երեխայի անձնական հատկանիշները:

Մասնակիցների միջև քննարկումները հստակ վերաբերելի են Էրիխ Ֆրոմի «Սիրելու արվեստի» մասին տեսությանը, որտեղ նա բացատրում է հայրական և մայրական սիրո տարբերությունները, ուրվագծում հոր դերը և թե ինչպես է այն ընկալվում հասարակության մեջ: Նա մասնավորապես նշում է. «Հայրը չի ներկայացնում բնական աշխարհը: Նա ներկայացնում է մտքի, մարդու կողմից ստեղծված իրերի, օրենքի և կարգի, կարգապահության, ճամփորդության և արկածների աշխարհը: Հայրը նա է, ով սովորեցնում է երեխային, ով ցույց է տալիս նրան դեպի աշխարհ տանող ուղին: Հայրը ունի ուսուցանելու, խնդիրների հաղթահարման համար ուղղորդելու գործառույթ: Հոր սերը պետք է առաջնորդվի սկզբունքներով և ակնկալիքներով. այն պետք է լինի համբերատար և հանդուրժող: Այն պետք է մեծացող երեխային հաղորդի կարողունակության աճող զգացում, և ի վերջո, թույլ տա նրան դառնալ իր սեփական հեղինակությունը՝ ձերբազատվելով հոր հեղինակությունից»[14]:

Մասնակիցները նկատել են, որ որոշ անձինք կարող են դժվարանալ իրենց զգացմունքներն արտահայտելու հարցում, մինչդեռ մյուսները ցուցաբերում են մեծ գորով և սեր: Լավ հայրը հուզական տեսանկյունից նկարագրվել է որպես մարդ, ով ամրապնդում է հուզական կապն իր երեխաների հետ, որակյալ ժամանակ է անցկացնում նրանց հետ, հանդես է գալիս որպես ընկեր և ուղենիշ, ի սկզբանե ակտիվորեն մասնակցում է նրանց դաստիարակությանը և նրանց վերաբերվում է որպես հավասարի:

> *«Լավ հայրը նա է, ով ոչ միայն սիրում է, այլև ակտիվորեն լծվում է աշխատանքի, հոգ է տանում երեխայի մասին և հետևողականորեն ցույց է տալիս այդ հոգատարությունը: Այս ներգրավվածությունը երաշխավորում է, որ երեխան չի մեծանա իր հորից օտարացած կամ կտրված զգալով»:*
>
> *Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, Երևանի խումբ*

> *«Սերը պետք է դրսևորվի երեխայի հանդեպ ցուցաբերվող ջերմությամբ՝ հնարավորություն տալով նրան դիտարկելու հորը ոչ թե պարզապես որպես մեկին, ում պետք է հնազանդվել, այլ որպես հարգելի և սիրելի կերպարի, ինչպես մեծ եղբայրը կամ մտերիմ ընկերը»:*
>
> *Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, Երևանի խումբ*

Մարզային խմբերի քննարկումները լույս են սփռել մի տարածված հասկացության վրա. ի համեմատ մայրերի՝ հայրերի արտահայտած սերը հաճախ պակաս ակնհայտ կամ անմիջապես տեսանելի է: Թեև մայր-երեխա կապը սովորաբար վաղ է զարգանում՝ ամրապնդվելով երեխայի ծնունդից հետո, հայրերի և նրանց երեխաների միջև հարաբերություններն ու սերը նկարագրվել են որպես ավելի բարդ: Մասնակիցներն ընդգծել են հոր դերը սեփական ինքնարտահայտման զարգացման և փոխադարձ վստահության և փոխըմբռնման միջավայր ստեղծելու գործում: Հայ հասարակության մեջ կա ընկալում, որ հայրերը մարմնավորում են խստությունը, մինչդեռ մայրերը հաճախ դիտվում են որպես իրենց երեխաների համար խաղաղություն և անվտանգություն ապահովող կերպարներ: Երբեմն հայրերի կողմից հույզերի ճնշումը տարընկալվում է

[14] Ֆրոմ Է. (1995): Սիրելու արվեստը: Դուբլին. Thorsons. ISBN 978-1-85538-505-4.

որպես խստություն, մինչդեռ իրականում դա կարող է բխել մանկական տրավմայից, որը նրանց ստիպում է դրսևորել հուզական զսպվածություն:

«Երեխան հաճախ հեշտությամբ է ընկալում մայրական սերը, մինչդեռ հոր սերն ընկալելը խորություն է պահանջում: Մենք ունենք մի ասացվածք, որն արտացոլում է մոր անմնացորդ հոգատարությունը իր երեխայի նկատմամբ՝ անկախ նրանց արարքներից: Ընդհանուր առմամբ, հայրական սերը խորանում է և առավել ակնհայտ է դառնում, երբ երեխան հասունանում է: Առանցքային է երեխային սեր տալը, և մարդիկ, լինեն մայրեր թե հայրեր, մանկուց պետք է ուշադիր լինեն իրենց սեփական հուզական վերքերի նկատմամբ՝ կանխելու դրանց ազդեցությունը երեխայի վրա»:

Տղամարդ մասնակից, 18-24 տարեկան, մարզային խումբ

Համեմատելով, թե ինչպես են մայրերն ու հայրերը դրսևորում իրենց սերն ու գորովը, մասնակիցները նաև ընդգծել են տղամարդկանց փոխկապակցված դերը իրենց կյանքում: Նրանք ընդգծել են, որ **լավ հայր** լինելը շաղկապված է **լավ ամուսին** լինելու հետ: Ե՛վ տղամարդ, և՛ կին մասնակիցները նշել են առանցքային դերը, որը խաղում են ծնողները իրենց երեխաների զարգացման վրա ազդելու տեսանկյունից՝ վարքագիծը, արարքները և հույզերի արտահայտումը նմանակելով: Օրինակ, եթե երեխան տեսնում է հոգատար և սիրող հոր, որը սակայն, միաժամանակ բռնության է ենթարկում մորը, հոր իդեալականացված կերպարն անմիջապես փշրվում է: Ուստի մասնակիցները շեշտել են գիտակցված որոշման առանցքային նշանակությունը, երբ տղամարդը մտորում է հայր դառնալու մասին: Նրանք ընդգծել են, որ առանց պատրաստակամության և պատրաստ լինելու մարդն առհասարակ չի կարող լավ ծնող լինել:

«Իրապես լավ հայր լինելու համար նախ պետք է հաջողել որպես լավ ամուսին: Անհավանական է, որ մեկը լինի վատ ամուսին՝ անհավատարիմ, դաժան կամ բռնի իր կնոջ նկատմամբ, և այնուամենայնիվ համարվի լավ հայր»:

Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, մարզային խումբ

«Իմ կարծիքով, լավ հայրը սկսվում է լավ ամուսին լինելուց, այնուհետև վերաճում լավ հոր դերի: Սակայն ի՞նչն է բնորոշում լավ հորը: Ինձ համար դա այն մարդն է, ով գիտակցաբար է կայացնում երեխա ունենալու ընտրությունը: Դա տեղի է ունենում, երբ նա գիտակցում է այդ ցանկությունն իր կյանքում՝ երաշխավորելով, որ իր չիրականացած երազանքներով կամ ծրագրերով չի ծանրաբեռնելու երեխային: Իմ կարծիքով այս գիտակցված որոշումն ու հանձնառությունն արդեն իսկ ուրվագծում են լավ հոր հատկանիշները»:

Կին մասնակից, 20-30 տարեկան, Երևանի խումբ

Մեկ այլ բան, որ մասնակիցները նշել են լավ հայր լինելու գաղափարի հետ կապված ընտանիքի՝ հատկապես երեխաների **անվտանգության և բարեկեցության** ապահովումն է տարբեր տեսանկյուններից: Սա ներառում է ընտանիքի կարիքները հոգալը, միջավայր ստեղծելը, որտեղ երեխաները կզգան վստահ և ապահով, իրենց զուգընկերոջ հետ երեխաների դաստիարակության հետ կապված պարտականությունները ակտիվորեն կիսելը և հուսալի կերպար լինելը սիրո, սթրեսի, ճախողման կամ նոր նախաձեռնությունների պահերին: Հատկանշական է, որ կին մասնակիցները շեշտել են հայրական դերը հուզական անվտանգության ապահովման գործում, մինչդեռ տղամարդ մասնակիցները հակված էին դիտարկելու ֆինանսական կայունությունը որպես անվտանգության ապահովման հիմնական կողմ:

Այս օրինաչափությունը միանգամայն սպասելի է՝ հաշվի առնելով հայ հասարակության մեջ տիրող սոցիալական կարծրատիպերը, որոնք հաճախ զգալիորեն շեշտադրում են ֆինանսական ապահովությունը՝ որպես հաջողության չափման միավոր՝ հատկապես ընտանիքի գլուխը լինելու համատեքստում: Այս նորմերը մեծապես ազդում են ընկալումների և սպասումների վրա՝ ձևավորելով այն, ինչը հասարակության մեջ համարվում է հաջողակ հայր կամ ընտանիքը կերակրող:

Լավ ծնողի և հատկապես լավ հոր հաջորդ հատկանիշը, որը ընդգծվել է մասնակիցների կողմից, ծնողի կարողությունն է՝ որոշակի տարիքից իրենց երեխաներին ինքնուրույնություն տալու: Սա արտահայտվում է հետևյալ կերպ՝

- հնարավորություն տալ նրանց ինքնուրույն որոշումներ կայացնելու, նույնիսկ եթե նրանք կարող են սխալվել, և պատասխանատվություն կրելու իրենց արարքների համար,
- ուղղորդել և խորհուրդ տալ, այլ ոչ թե ստիպել գնալ որոշ գործողությունների,
- երեխաների անունից խնդիրները լուծելու փոխարեն սովորեցնել նրանց խնդիրների լուծման հմտություններ,
- տալ ծավալուն տեղեկատվություն և գիտելիքներ՝ զարգացնելով երեխաների գիտակցության զգացումը և ըմբռնումը տարբեր իրավիճակներում և այլն:

«Լավ հայրը աստիճանաբար հասկանում է իր երեխայի հասունությունը: Թեև բնական է անհանգստանալը, սակայն կենսականորեն կարևոր է աստիճանաբար բաց թողնել՝ թույլ տալով երեխային զարգացնել իր անկախությունը և ինքնուրույն կազմակերպել իր կյանքը»:

Տղամարդ մասնակից 24-35 տարեկան, մարզային խումբ

«Իմ կարծիքով լավ հայրը նպաստում է երեխայի՝ իր կյանքի ուղին ընտրելու կարողությանը, այլ ոչ թե պարտադրում սեփական չիրագործված երազանքները: Դա այն է, երբ երեխային հնարավորություն է տրվում ինքնուրույն որոշումներ կայացնելու իր ապագա ուղու վերաբերյալ»:

Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, մարզային խումբ

Տղամարդ մասնակիցները շեշտել են անհատների անձնական կյանքի և տարածության նշանակությունը՝ հատկապես ամուսնանալու և երեխաներ ունենալու պատասխանատվությունը ստանձնելուց հետո: Նրանք ընդգծել են անձնական հանգստի և կյանքի առօրեական պահանջներից զերծ ժամանակի անհրաժեշտությունը: Նրանք մտահոգություն են հայտնել, որ անձնական երջանկության անտեսումը կարող է նրանց վերածել առօրեական ապրելակարգին հետևողների՝ ի վերջո խաթարելով ընտանիքի ներդաշնակությունը: Ընդունելով, որ սա տարածվում է երկու ծնողների վրա, նրանք ընդգծել են, որ հասարակության ակնկալիքները՝ մասնավորապես հայրերի վրա առաջնային կերակրողներ լինելու ճնշումը, չպետք է ստվերեն նրանց անձնական ցանկությունները: Նրանք հասկանում են, որ հայ հասարակության մեջ այս խնդիրն ավելի հաճախ կապվում է մայրերի հետ, սակայն շեշտել են, որ երկու ծնողներն էլ իրավունք ունեն մի պահ կտրվել ընտանեկան պարտականություններից և կենտրոնանալ անձնական բարեկեցության և ուժերի վերականգնման վրա:

Որոշ մասնակիցներ նշել են, որ **երեխաները հաճախ ընդօրինակում են այն, ինչ տեսնում են մանկության և պատանեկության տարիներին**, ինչը կարող է ձգվել մինչև հասուն տարիք: Անդրադառնալով Զիգմունդ

Ֆրոյդի հոգեբանական զարգացման փուլերի տեսությանը, նրանք ընդգծել են Էդիպյան բարդույթի ազդեցությունը ապագա զուգընկերոջ ընտրության և հակառակ սեռի նկատմամբ ռոմանտիկ նախասիրությունների վրա: Համաձայն Ֆրոյդի տեսության, սովորաբար 3-6 տարեկան և զարգացման ֆալիկական փուլում գտնվող տղաներն ու աղջիկները անգիտակցաբար ուժեղ կապվածություն են ձևավորում իրենց հակառակ սեռի ծնողների նկատմամբ (այսինքն՝ տղաները՝ մայրերի, իսկ աղջիկները՝ հայրերի)[15]: Հետևաբար, մասնակիցները առաջադրել են այն գաղափարը, որ տղաները կարող են իրենց **ապագա կյանքի զուգընկերոջ մասին ընկալումներն ու իդեալականացումը հիմնել** մանկության այս օրինաչափությունների և իրենց մոր կերպարի վրա:

«Երեխաները հաճախ արտահայտում են այնպիսի մտքեր, ինչպիսիք են՝ «Երբ ես մեծանամ, ամուսնանալու եմ հայրիկիս հետ» կամ «Ես ամուսնանալու եմ մայրիկիս հետ», ինչը նրբորեն արտացոլում է նրանց ընկալումը յուրաքանչյուր ծնողի դերի և հատկանիշների մասին: Հետևապես, գիտակցաբար, թե անգիտակցաբար, այս վաղ տարիքի ազդեցությունները կարող են ձևավորել մեր նախասիրությունները զուգընկեր ընտրելու հարցում՝ հաճախ արտացոլելով տղամարդու և կնոջ դերերի վերաբերյալ կարծրատիպերը, որոնք մենք յուրացնում ենք մեր ծնողներից»:

Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, Երևանի խումբ

Ինչ վերաբերում է **երեխաների դաստիարակության և տարբեր սեռերի երեխաների հանդեպ հայրերի կողմից սիրո դրսևորման տարբերություններին**, կին մասնակիցները նկատել են, որ հայրերը հակված են առանձնահատուկ ջերմություն դրսևորելու իրենց դուստրերի նկատմամբ՝ հատկապես նրանց մանկության տարիներին և մինչև նրանց ամուսնությունը, ինչը ենթադրում է ավելի հուզական կապ: Այնուամենայնիվ, նրանք նշել են, որ հայրերը կարող են ավելի խիստ լինել իրենց որդիների նկատմամբ՝ նպատակ ունենալով սերմանել տոկունություն և պատրաստականություն՝ դիմակայելու իրենց հետագա կյանքի մարտահրավերներին: Այս հակադրությունը բացատրվել է նրանով, որ հայրերը առաջնահերթություն են տալիս իրենց դուստրերի հետ հուզական մտերմությանը, քանի որ նրանք ակնկալում են, որ իրենց դուստրերը հեռանալու են ծնողական տնից՝ կազմելու իրենց ընտանիքները՝ միաժամանակ կենտրոնանալով իրենց որդիներին ապագա խոչընդոտները հաղթահարելուն նախապատրաստելու վրա:

«Հայերի շրջանում տարածված մշակութային նորմը հաճախ ենթադրում է ավելի նուրբ վերաբերմունք դրսևորել և լրացուցիչ ուշադրություն դարձնել աղջիկներին, իսկ տղաների հետ լինել ավելի խիստ: Ես տեսնում եմ այս օրինաչափությունը՝ հասկանալով, որ կա կարծիք, որ այս մոտեցումն օգնում է տղաներին մեծանալ որպես առավել տոկուն անհատներ»:

Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, մարզային խումբ

«Հայրերը հաճախ ավելի ամուր կապեր են ձևավորում իրենց դուստրերի հետ, սակայն աղջիկներից ակնկալիքները կրկնակի բարձր են, քան տղաներից: Թեև տղաների իրավունքների մասին գուցե ավելի քիչ է խոսվում, սակայն տղաներին հաճախ սովորեցնում են, որ նրանք կարող են հասնել ամեն ինչի, նրանց խրախուսում են հետևել իրենց սրտին, մինչդեռ աղջիկները, ընդհակառակը, բախվում են այլ՝ ավելի սահմանափակող ակնկալիքների»:

Կին մասնակից, 20-30 տարեկան, Երևանի խումբ

[15] Ֆրոյդ, Զ. (1905): Երեք էսսե սեռականության տեսության վերաբերյալ. Se, 7:

«Հոր դերը աղջիկների կյանքում հաճախ էական նշանակություն ունի, և հաճախ կա ընկալում, որ հայրերը ավելի խորը ջերմություն են ցուցաբերում իրենց դուստրերի նկատմամբ, քան որդիների»:

Կին մասնակից, 20-30 տարեկան, մարզային խումբ

Հատկանշական է, որ թեև և՛ տղամարդ, և՛ կին մասնակիցները գիտակցում էին հայրական ջերմության այս տարբերությունները տարբեր սեռերի երեխաների հանդեպ, սակայն այդ տարբերությունների շեշտադրումն ու քննարկումն առավել ցայտուն էին կին մասնակիցների շրջանում, քան տղամարդ:

Այսպիսով, ընդհանուր առմամբ, հետազոտության մասնակիցները նշել են լավ հոր հիմնական հատկանիշները: Լավ հայրը նախևառաջ պետք է լինի լավ ամուսին և օրինակելի հայր իր երեխաների համար: Նա նաև պետք է լինի ընկեր, մենթոր, խորհրդատու երեխայի զարգացման ողջ ընթացքում՝ տալով անկախություն, միաժամանակ ուղղորդելով որոշումների կայացման հարցում: Ավելին, կատարյալ հայրը չպետք է զսպի իր հույզերը կամ իր երեխաներից պահանջի զսպել հույզերը: Փոխարենը՝ նա պետք է բացահայտորեն ցույց տա իր սերը և հոգատարությունը՝ հարմարեցնելով դրանց արտահայտչաձևը՝ ըստ երեխայի տարիքի: Կար միաձայն համաձայնություն, որ սեռով պայմանավորված ցանկացած տարբերակված վերաբերմունք անընդունելի է և կարող է ապագայում երեխաների համար էական խնդիրների հանգեցնել: Այնուամենայնիվ, մասնակիցները նշել են, որ հուզական կապերն ու ջերմության դրսևորումները կարող են նույնական չլինել երկու սեռերի հանդեպ՝ հատկապես հաշվի առնելով հասարակության ակնկալիքները առ այն, որ հայկական մշակույթում կարելի է տղաներին մի փոքր ավելի խիստ վերաբերվել, քան աղջիկներին:

Անհրաժեշտ անցումներ և փոփոխություններ

Տղամարդկանց դերերի, ակնկալիքների, խտրականության և տղամարդկանց մասին ընդհանուր ընկալումների վերաբերյալ քննարկումները նաև լույս են սփռել անհրաժեշտ փոփոխությունների և անցումների վրա, որոնք կարևոր են հասարակության զարգացման, աճի և առաջընթացի համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելու համար: Հաստատված օրինաչափություններից բխող կարծրատիպային կամ թունավոր հետևանքները մեղմելուն ուղղված ակնկալվող հասարակական փոփոխությունները քննարկելիս ի հայտ են եկել ուշագրավ տարբերություններ մարզային համայնքների և մայրաքաղաքի տղամարդ մասնակիցների տեսակետների միջև: Երևանի մասնակիցները հաստատել են հասարակական հայացքների նկատելի փոփոխությունը՝ ավելի շատ մոտենալով եվրոպական ստանդարտներին և հեռանալով անցյալի ավանդական ակնկալիքներից: Ի հակադրություն, մարզային խմբերի տղամարդ մասնակիցներն ընդգծել են ավանդականից ավելի ժամանակակից և առաջադեմ հայացքների անցում կատարելու անհրաժեշտությունը՝ նպաստելու հասարակության արական սեռի ներկայացուցիչների կյանքի դյուրացմանը:

Երևանի մասնակիցները չեն մատնանշել այն փոփոխությունները, որոնք ցանկանում են տեսնել՝ նշելով, որ քաղաքում ընկալումները տարիների ընթացքում զարգացել են՝ ընձեռելով ավելի շատ ազատություններ, քան նախորդ տասնամյակներում: Նրանք, սակայն, ընդունել են, որ բախվում են հայեցակարգային մարտահրավերների, երբ մարզային համայնքների բնակիչները քաղաք են բերում իրենց կարծրատիպային տեսակետները: Այս հայեցակարգային բախումը հաճախ հանգեցնում է կոնֆլիկտների և թյուրըմբռնումների: Նրանք ընդգծել են, որ Երևանում տիրող վերաբերմունքը, ընկալումները ու գաղափարները հիմնականում պակաս կարծրատիպային են՝ ի համեմատ մարզային համայնքների:

Մարզային խմբերի մասնակիցները, ինչպես կին, այնպես էլ տղամարդ, ընդհակառակը, ընդգծել են հասարակության մեջ առանցքային փոփոխությունների առաջացող անհրաժեշտությունը՝ անդրադառնալով իրենց համայնքներում և առհասարակ հասարակության մեջ նկատված խնդիրներին:

- Հաճախ ընդգծվող խնդիր է եղել **կին-տղամարդ ընկերության** մասին հասարակության պատկերացումը: Մարզային համայնքներում հակառակ սեռերի պարզ ընկերական հարաբերությունները չեն ընդունվում: Ըստ գերակշռող համոզմունքների, եթե հակառակ սեռի երկու անձ ընկերանում է, ենթադրվում է, որ կա ռոմանտիկ սեր կամ ամուսնության հեռանկար, և այլընտրանքներ չեն ընդունվում: Մասնակիցները կարծում էին, որ այս ընկալումը պետք է փոխվի՝ ավելի առողջ հասարակություն և դրա անդամների միջև ավելի առողջ հարաբերություններ ունենալու համար:
- Մարզային համայնքներում տարածված մեկ այլ խնդիր **ամուսնության համար կատարյալ տարիքի** ընկալումն է: Գոյություն ունի հասարակության ակնկալիք, որ մարդիկ՝ հատկապես կանայք, պետք է ամուսնանան մինչև 25 տարեկանը: Հակառակը համարվում է լուրջ խնդիր և հաճախ դիտվում որպես ողբերգություն ինչպես ընտանիքի, այնպես էլ համայնքի համար: Մասնակիցների կարծիքով դա լրացուցիչ ճնշում է տղամարդկանց վրա, քանի որ նրանք հաճախ ստիպված են լինում հապճեպ որոշումներ կայացնել՝ հիմնվելով հասարակության ակնկալիքների և պահանջների վրա, քան սեփական հույզերի կամ անձնական մտադրությունների վրա:
- Մարզային համայնքներում տղամարդկանց համար կա լրացուցիչ բեռ. գոյություն ունի չգրված ակնկալիք, որ **ընտանիքի տղա երեխան որոշակի տարիքից պատասխանատվություն է կրում իր ծնողներին ֆինանսապես աջակցելու համար** մինչև ծնողների կյանքի վերջը: Սա դիտվել է որպես խտրականության ձև՝ սահմանափակելով անհատի ազատությունն ու ընտրությունը ընտանիքի ներսում: Մասնակիցները կարծիք են հայտնել, որ այս ակնկալիքը պետք է դառնա ավելի ճկուն և պակաս պարտադիր:
- Մարզային խմբերը նաև ընդգծել են աղջիկների և կանանց կողմից տղաներին և տղամարդկանց առաջադրվող հասարակության սպասելիքները: Նրանք հայտնել են, որ հասարակությունը, հատկապես գյուղական վայրերում, պետք է **ընդունի և հարմարվի ուրիշների կյանքին չմիջամտելու մտքին**: Նրանք մատնանշել են որոշակի վարքագծի իդեալականացումը, որը մարդիկ հակված են պարտադրել ուրիշներին՝ ընդգծելով այդ ակնկալիքները վերագնահատելու և փոփոխելու անհրաժեշտությունը:

Կին մասնակիցների քննարկումները արտացոլել են որոշ մտահոգություններ, որոնք արտահայտել էին մարզային խմբերի տղամարդիկ, մասնավորապես՝ կապված կին-տղամարդ հարաբերությունների և կանանց սեռական արտահայտման հնացած սահմանափակումների հետ, որոնք հակասում են տղամարդկանց տրվող ազատություններին: Այնուամենայնիվ, Երևանի մասնակիցները կարևորել են **կրթական և մշակութային փոփոխությունների** անհրաժեշտությունը, որոնք կօգնեն հասարակությանը ճանաչել և հրաժարվել հնացած ավանդույթներից: Հետաքրքիր է, որ մարզային համայնքների կանայք արտահայտել են նույն փոփոխությունների անհրաժեշտությունը, որն ընդգծել էին տղամարդիկ՝ հատկապես կապված տղամարդկանց առաջադրվող հնացած ակնկալիքների հետ, որոնք վերաբերում են հուզական կայունությանը, ամրությանը և քաջությանը:

Գիտակցելով հասարակության զարգացման անհրաժեշտությունը՝ թե՛ տղամարդ, թե՛ կին մասնակիցները ընդգծել են անձնական պատասխանատվության կարևորությունը: Նրանք հավատացած էին, որ սոցիալա-

կան նորմերի փոփոխության խթանումը պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամի ընկալումների և վերաբերմունքի ներքին փոփոխություն: Ներքուստ փոփոխություններ կատարելով՝ նրանք կարող են նպաստել սոցիալական նորմերի և ակնկալիքների ավելի մեծ վերափոխումներին:

Վեբկայքեր տղամարդկանց համար

Համացանցի և սոցիալական ցանցերի, ինչպես նաև դեմ առ դեմ քննարկման ակումբներ ստեղծելու առաջարկության վերլուծությունն ու ուսումնասիրությունները հաշվի առնելով՝ կարելի է ասել, որ հայ հասարակության մեջ չկա մի հարթակ, որտեղ տղամարդիկ կարող են քննարկել իրենց խնդիրները, ստանալ խորհուրդ կամ խորհրդակցել, գտնել ուսումնական նյութեր և բովանդակություն ինքնազարգացման և աճի համար:

Հայ հասարակության մեջ տղամարդկանց համար նախատեսված հատուկ առցանց հարթակի բացակայությունը կարևոր բաց է: Մինչ կանանց համար նախատեսված հարթակներն ընդգրկում են տարբեր թեմաներ, ինչպիսիք են հղիությունը, մայրությունը և առողջությունը, տղամարդկանց կարիքներին հարմարեցված նմանատիպ տարածքի զգալի պակաս կա: Տղամարդկանց համար գոյություն ունեցող սակավաթիվ հարթակները հիմնականում կենտրոնանում են սեռական բովանդակության վրա, որը հաճախ ոչ պատշաճ բնույթ է կրում:

Միջազգային հարթակների ուսումնասիրություններով բացահայտվել են մի քանի մոդելներ, որոնք աջակցություն և տեղեկատվություն են տրամադրում տղամարդկանց: Որոշ ուշագրավ օրինակների թվում է հետևյալը.

1. **Reddit-ի արտադրանքներ (ԱՄՆ). r/MensLib -** Կենտրոնանում է տղամարդկանց խնդիրների՝ առաջադեմ տեսանկյունից քննարկման վրա՝ ընդգրկելով այնպիսի թեմաներ, ինչպիսիք են գենդերային հավասարությունը, հոգեկան առողջությունը և հարաբերությունները:
2. **r/AskMen Forum-** Խորհուրդների փոխանակման հարթակ, որն ընդգրկում է թեմաների լայն շրջանակ՝ հարաբերություններից և ծանոթությունների վերաբերյալ խորհրդատվությունից մինչև ապրելակերպ և մասնագիտական ուղղորդում:
3. **HeadsUpGuys (Կանադա).** Ապահովում է հոգեկան առողջության ռեսուրսներ, աջակցության ցանցեր և գործիքակազմ դեպրեսիայով տառապող տղամարդկանց համար:
4. **Men's Sheds (Ավստրալիա, ՄԹ, Իռլանդիա և այլն).** Ֆիզիկական տարածքներ, որտեղ տղամարդիկ հավաքվում են տարբեր զբաղմունքների համար՝ խթանելով ընկերությունը և աջակցության ցանցերը:
5. **The Good Men Project (ԱՄՆ).** Առցանց հրատարակություն և համայնք, որը քննարկում է առնականությունը, հարաբերությունները, հոգեկան առողջությունը և անձնական աճը:
6. **Man Therapy (ԱՄՆ).** Հոգեկան առողջության առցանց ռեսուրս, որն օգտագործում է հումորը տղամարդկանց հոգեկան առողջության խնդիրներին անդրադառնալու համար:
7. **CALM (Campaign Against Living Miserably, ՄԹ).** Առաջարկում է աջակցություն և թեժ գիծ տղամարդկանց համար, ովքեր տառապում են հոգեկան առողջության հետ կապված խնդիրներով:
8. **ManKind Project (ԱՄՆ).** Համաշխարհային կազմակերպություն, որը տրամադրում է անձնական աճի աջակցություն, աշխատարաններ և համայնքներ տղամարդկանց համար՝ ուսումնասիրելու և զարգացնելու ավելի առողջ ապրելակերպ և հարաբերություններ այլոց հետ:
9. **The Art of Manliness Community (ԱՄՆ).** Համայնք, որն ուսումնասիրում է ավանդական առնականության տարբեր կողմերը՝ տալով խորհուրդներ անձնական աճի, հարաբերությունների և գործնական հմտությունների վերաբերյալ:

Այս միջազգային հարթակները ցույց են տալիս տարբեր մոտեցումներ, որոնք ուղղված են տղամարդկանց կարիքներին՝ սեռական բովանդակությունից անդին՝ ծառայելով հոգեկան առողջության, անձնական աճի և համայնքի ձևավորման նպատակներին: Հայաստանում նմանատիպ հարթակի ստեղծումը կարող է լրացնել բացը և արժեքավոր ռեսուրսներ տրամադրել խորհրդատվություն, աջակցություն և կրթություն փնտրող տղամարդկանց: Զարմանալի չէ, որ տղամարդ մասնակիցները կարևորել են այլընտրանքային վայրերը, որոնք ծառայում են որպես քննարկումների և աջակցության ոչ պաշտոնական հարթակներ: Դրանց թվում են փաբերը, ֆուտբոլային ակումբները, հրաձգարանները և նմանատիպ վայրերը, որտեղ տղամարդիկ հավաքվում են՝ տարբեր թեմաների շուրջ զրուցելու ընկերների, ծանոթների կամ նույնիսկ անծանոթների հետ:

Հետաքրքիր է նկատել, որ որոշ մասնակիցներ տեղյակ էին նմանատիպ առցանց հարթակների մասին Հայաստանից դուրս, մասնավորապես Ռուսաստանում՝ լեզվական խոչընդոտներից ելնելով, որոնք սահմանափակում են անգլիալեզու հարթակների հասանելիությունը: Նրանք նշել են նման կարևոր հարթակների պակասը հենց Հայաստանում՝ ընդգծելով այնպիսի տարածքի անհրաժեշտությունը, որտեղ տղամարդիկ կանդրադառնան իրենց մտահոգություններին և կծավալեն քննարկումներ իրենց սեփական համատեքստին հարմարեցված միջավայրում:

«Արտասահմանում կան բազմաթիվ ողորտներ և հարթակներ, որտեղ առկա է ռուսերեն տարբերակը, բայց, ցավոք, չկա հայերեն տարբերակը: Հավատացնում եմ, որ եթե լիներ,այն զգալի փոփոխություններ կբերեր»:

Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, Երևանի խումբ

Ընդգծվել է մասնագիտական տեղեկատվական հարթակի կարևորությունը, հատկապես սեռական հասունացման տարիքում գտնվող տղաների համար՝ սեռական զարգացման և առողջության վերաբերյալ ճշգրիտ, մասնագիտական գիտելիք տրամադրելու համար: Մտահոգությունը պատճառն է համացանցում առկա չստուգված տեղեկատվության հսկայական քանակը, որը վտանգ է ներկայացնում այս թեմաների վերաբերյալ տեղեկատվություն փնտրող դեռահասների և անչափահասների համար:

Մասնակիցները հետաքրքրություն են հայտնել մասնագետներով և մենթորներով համալրված հարթակների նկատմամբ՝ ընդգծելով վստահելի տեղեկատվության կարևորությունը ի հակադրություն սեփական փորձառության վրա հիմնված պատմությունների: Երևանի մասնակիցները հակված էին դեպի առցանց հարթակներ իրենց զբաղված գրաֆիկի պատճառով, ինչը կբարդացնի հանդիպումներին ֆիզիկապես ներկա գտնվելը, մինչդեռ մարզային խմբերի մասնակիցները նախընտրել են դեմ առ դեմ հանդիպումները՝ անանունությունը երաշխավորելու պայմանով: Ինչպես և կարելի էր ակնկալել, մարզային խմբերի որոշ մասնակիցներ դեմ էին ցանկացած տեսակի հարթակներին՝ լինի առցանց, թե անցանց՝ համարելով, որ ամոթալի է սեփական խնդիրները բացահայտել անծանոթին, ով հետագայում կարող է նրանց ծաղրի առարկա դարձնել հանրության առջև: Մյուսները նախապատվություն են տվել միայն անանուն զրուցարաններին, որտեղ մարդիկ կարող են անձնական հարցեր տալ առանց նույնականացման և կարող են ստանալ կոնկրետ պատասխաններ իրենց հարցերին:

«Ես այդ հարթակը պատկերացնում եմ ըստ մասնագիտությունների կամ թեմաների դասակարգված շարքերով: Օգտատերերը կարող են հարթակում բաց հարցեր տալ, իսկ հարթակի համակարգողներն այդ հարցերը համակարգված կերպով կփոխանցեն հատուկ մասնագետներին: Մասնագետները պատասխան-

ներ կտան, և այդ պատասխանները կիմբավորվեն համապատասխան մասնագիտության կամ թեմայի ներքո: Հետագայում այդ ողորտով հետաքրքրված օգտատերերը կարող են մուտք գործել կոնկրետ բաժին՝ համապատասխան հարցեր ու պատասխաններ գտնելու համար»:

Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, Երևանի խումբ

«Ես կարծում եմ, որ հարթակը չպետք է սահմանափակվի որոշակի ուղղությամբ. ավելի շուտ, այն պետք է նպաստի փորձի փոխանակմանը: Տարբեր մասնագետների համախմբումը տարբեր հարցերի վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու համար օգտակար կլինի: Յուրաքանչյուր մասնագետ կարող է ներկայացնել իր տեսակետը՝ նպաստելով բազմազան փորձի փոխանակմանը: Այս մոտեցումն իմ կարծիքով առավել կենտրոնացված և համակողմանի պատկերացումներ կտա»:

Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, Երևանի խումբ

«Ինձ համար այս առցանց զրուցարանի համակարգն ավելի շուտ բացառություն է, քան նախընտրություն: Ես հակված եմ դեպի անցանց հանդիպումները. դեմ առ դեմ նստելը թույլ է տալիս ավելի բաց շփվել, հարցեր տալու ազատություն և այլ մակարդակի կապ հաստատել: Անձամբ ինչ-որ մեկի հետ շփվելը զգալիորեն տարբերվում է էկրանի դիմաց շփվելուց: Դեմ առ դեմ հանդիպումների ժամանակ դուք կարող եք գնահատել հույզերը, տեսակետները և ժեստերը՝ ավելի համապարփակ հասկանալով, թե տվյալ անձն ինչ է ցանկանում փոխանցել: Հատկապես այն քննարկումների պարագայում, որոնք անցանց կարող են ավելի լավ լինել, ես մեծապես նախընտրում եմ դեմ առ դեմ հանդիպումները»:

Տղամարդ մասնակից, 18-25 տարեկան, մարզային խումբ

Մասնակիցներն ընդգծել են, որ հարթակի հաջողությունը կախված է դրա հուսալիությունից: Հայ հասարակության մեջ տիրող առանցքային կարիքներին անդրադառնալու համար հարթակը պետք է առաջնահերթություն տա օգտատերերի միջև փոխվստահության ձևավորմանը: Անանունությունը, հուսալիությունը և ստուգված տեղեկատվությունը պետք է երաշխավորվի՝ կանխելու ցանկացած հնարավոր բացասական հետևանք և ապահովելու հարթակի լրջությունն ու որակը:

«Շատերն այլևս բակերում ժամանակ չեն անցկացնի: Նրանք, ամենայն հավանականությամբ, կդիմեն այս հարթակին՝ լինի անցանց, թե առցանց, քանի որ բոլորն այս օրերին բախվում են խնդիրների և լուծումներ փնտրում դրանց համար»:

Տղամարդ մասնակից, 26-35 տարեկան, Երևանի խումբ

Հարթակը կարող է հանդես գալ որպես կենտրոն այն անձանց համար, ովքեր ձգտում են ձեռք բերել նոր, պահանջված հմտություններ և ապահով աշխատանքային հնարավորություններ: Այն մարդկանց հնարավորություն կտա հասանելիություն ունենալ կրթական ռեսուրսներին նոր մասնագիտություններ սովորելու և հնարավոր գործատուների հետ կապվելու համար՝ ստեղծելով կամուրջ կրթության և աշխատանքի միջև այն տղամարդկանց համար, ովքեր ունեն արդիական մասնագիտություններով աշխատանքի հեռանկարների կարիք:

Մասնակիցներն առանձնացրել են այսպիսի հարթակներում քննարկման համար հարմար թեմաներ.

- Սեռական առողջություն և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելում,
- Սեր, հարաբերություններ,

- Հոգեբանական խորհրդատվություն,
- Առողջության հետ կապված հարցեր,
- Տարբեր մշակույթներում տղամարդկանց առջև ծառացող մարտահրավերներ,
- Ավտոմեքենաներ և դրանց առնչվող բոլոր թեմաները:

Այսպիսով, տղամարդ մասնակիցների հետ քննարկումները վեր հանեցին հարթակի անհրաժեշտությունը, լինի դա առցանց, թե անցանց, որտեղ նրանք կարող են ազատորեն արտահայտել իրենց մտահոգությունները, քննարկել տարբեր թեմաներ և ստանալ հասանելի տեղեկատվություն և գիտելիքներ, որոնք ներկայումս չունեն: Այնուամենայնիվ, մայրաքաղաքի և մարզային համայնքների մասնակիցների միջև կային նախապատվությունների զգալի տարբերություններ: Այս տարբերությունները պետք է հաշվի առնել կայքը մշակելիս՝ ապահովելու, որ այն արդյունավետորեն ծառայի վերջնական շահառուների տարբեր խմբերի բազմազան կարիքներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում տղամարդկանց դերերի և հասարակության ակնկալիքների համապարփակ ուսումնասիրությունը լույս սփռեց մի բարդ համայնապատկերի վրա, որը մեծապես կրում է ավանդական նորմերի, ի հայտ եկող փոփոխությունների և զարգացող ընկալումների ազդեցությունը: Հետազոտությունն ընդգծեց, թե ինչպես են արմատացած կարծրատիպերը և հասարակական կառուցակարգերը զգալիորեն ձևավորում տղամարդկանց վարքագիծը՝ ազդելով նրանց ձգտումների վրա անձնական, մասնագիտական և ընտանեկան հարթություններում:

Մասնագիտական ոլորտում տղամարդիկ զգալի ճնշման են ենթարկվում՝ հետևելու ավանդական կերակրողի և պաշտպանի դերերին: Հաճախ ակնկալվում է, որ նրանք հետամուտ լինեն շահութաբեր կարիերայի և կայուն աճ գրանցեն: Թեև երկու սեռերն էլ ընդունում էին ընտանիքներում փոփոխվող դինամիկան՝ գիտակցելով ընդհանուր պարտականությունները, սակայն հասարակական կառուցակարգերը շարունակում են տղամարդկանց վաղ տարիքից պարտադրել հուզական սահմանափակումներ՝ ձևավորելով նրանց ինքնությունն ու վարքագիծը:

Ավելին, գենդերով պայմանավորված անհավասարությունը և խտրականությունը տարածված են տարբեր հարթություններում, այդ թվում՝ աշխատանքի, հարաբերությունների, հաղորդակցության և զինվորական ծառայության: Մասնակիցները նշել են տղամարդկանց հանդեպ հակասական պահանջների օրինաչափությունը՝ ընդգծելով հասարակության ակնկալիքների պատճառով անհատականության ձևավորման մարտահրավերները:

Կարծիքները նաև վեր են հանել բազմակողմ մարտահրավերներ, որոնք ընդգրկում են անձնական, հարաբերությունների և սոցիալական ոլորտները՝ հատկապես ազդելով կրթության, ընտանեկան հարաբերությունների և հոգեկան բարեկեցության վրա: Մասնակիցները ընդգծել են հաճախ անտեսանելի ճնշումները, որոնց բախվում են երիտասարդները, հատկապես վաղ տարիքից աշխատաշուկա մուտք գործելը, որն ազդում է նրանց կրթական ձգտումների վրա:

Աջակցություն փնտրելով՝ տղամարդիկ հակված են դիմելու վստահելի անձանց, ինչպիսիք են ընտանիքը և ընկերները՝ ընդգծելով ոչ միայն խնդիրներն ինքնուրույն լուծելու սոցիալական նորմը, այլև հուզական հարցերում հայրերի սահմանափակ ներգրավվածության մասին մտահոգությունները: Կին մասնակիցները նշել են այս միտումը՝ հաստատելով խնդիրներն ինքնուրույն լուծելու կամ ընկերներից աջակցություն հայցելու տղամարդկանց նախապատվությունը:

Տղամարդկանց առողջության մասին քննարկումներն ընդգծել են սեռական առողջության խնդիրների վերաբերյալ սահմանափակ իրազեկվածությունն ու դրանք քննարկելու անհարմարությունը, որը զուգորդվում էր սոցիալական նորմերով և բուժաշխատողների սեռով: Հետպատերազմյան շրջանում հոգեկան առողջության համար հոգեբաններին դիմելու դրական տեղաշարժը ցույց է տալիս վերաբերմունքի փոփոխություն, թեև խարանը շարունակում է պահպանվել հիմնականում ավագ սերունդների շրջանում:

Սիրո և հայրության դրսևորումները պայմանավորված են տարբեր գործոններով՝ ներառյալ երեխաների տարիքը, սեռը և հայրերի հուզական կարողությունները՝ բացահայտելով հայր-երեխա հարաբերությունների բարդությունները: Հետազոտությունը ընդգծել է սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքից հրաժարվելու անհրաժեշտությունը՝ միաժամանակ ճանաչելով հասարակության ակնկալիքները, որոնք ազդում են տղաների և աղջիկների միջև հուզական կապերի վրա:

Հասարակության փոփոխությունների վերաբերյալ քննարկումները վեր են հանել տարամետ տեսակետներ քաղաքային և մարզային խմբերի միջև՝ ընդգծելով կարևոր անցումների անհրաժեշտությունը՝ հասարակության ճնշումը թուլացնելու համար: Մարզային համայնքների մասնակիցների կողմից փոփոխության են ենթակա այնպիսի հարցեր, ինչպիսիք են կին-տղամարդ ընկերությունը, ամուսնության կատարյալ տարիքը, ֆինանսական պարտականությունները և տղաներին և տղամարդկանց առաջադրվող հասարակության ակնկալիքները՝ կրկնելով իրենց կին գործընկերների կողմից արտահայտված մտահոգությունները:

Հայաստանում տղամարդկանց համար նախատեսված հարթակը, որը կընդգրկի հոգեկան առողջության, անձնական աճի թեմաները և համայնքի ստեղծումը, շատ օգտակար է համարվել: Մասնակիցները կարևորել են տարբեր քննարկումների նախընտրությունները այնպիսի միջավայրերում, որոնք հարմար են ընկերների կամ ծանոթների միջև ոչ պաշտոնական զրույցներ ծավալելու համար: Նման հարթակի վերաբերյալ կարծիքները տատանվում էին մշակութային փոփոխություններից և մասնագիտական տեղեկատվությունից մինչև առցանց ընդդեմ անցանց նախապատվություններ և հարթակի հուսալիություն՝ նպատակ ունենալով տրամադրել համապարփակ ռեսուրս՝ ուղղված տղամարդկանց կարիքներին:

Ի վերջո, հետազոտությունը բացահայտել է հասարակության ակնկալիքների և ավանդական նորմերի համատարած ազդեցությունը Հայաստանում տղամարդկանց կյանքի՝ ներառյալ մասնագիտական ձգտումների, հույզերի արտահայտման, ընտանեկան դերերի և առողջության վրա: Այն ընդգծել է հասարակության զարգացման անհրաժեշտությունը, որը կզուգորդվի վերաբերմունքի և սերնդի փոփոխությամբ՝ ճանապարհ հարթելով ավելի բաց միջավայրի համար: Երևակայվող հարթակը, որը հարմարեցված կլինի տղամարդկանց բազմակողմանի կարիքներին, կարող է ծառայել որպես առանցքային ռեսուրս՝ խթանելով առողջ քննարկումները և էապես նպաստելով հայ հասարակության մեջ տղամարդկանց առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը:

BIBLIOGRAPHY

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Bishop Ch. (2013). Psychosocial Stages of Development, The Encyclopedia of Cross-Cultural Psychology
2. Essig, E. & Soparnot R., (2019). Re-thinking gender inequality in the workplace – a framework from the male perspective, Dans Management, vol 22, 373- 410
3. Freud, S. (1905). Three essays on the theory of sexuality.
4. Fromm E. (1995). The Art of Loving. Dublin: Thorsons. ISBN 978-1-85538-505-4. pp. 31-35
5. Hardach S. (2019). The secret of being a good father, BBC article
6. Kaya, A.; Iwamoto, D.K.; Brady, J.; Clinton, L.; Grivel, M. (2019). The role of masculine norms and gender role conflict on prospectivewell-being among men. Psychol. Men Masc.
7. Palkovitz, R. (2002). Involved fathering and men's adult development: Provisional balances. Mahwah, NJ: Lawrence Erlbaum Associates, Inc.
8. Parker K., Stepler R. (2017). Americans see men as the financial providers, even as women's contributions grow, Pew Research Center
9. Planned Parenthood platform at https://www.plannedparenthood.org/
10. Rudman, L.A. & Mescher, K. (2013). Penalizing Men Who Request a Family Leave: Is Flexibility Stigma a Femininity Stigma? Journal of Social Issues, 69 (2)
11. Sileo K. M., Kershaw T. S. (2020). Dimensions of Masculine Norms, Depression, and Mental Health Service Utilization: Results From a Prospective Cohort Study Among Emerging Adult Men in the United States, Published online
12. Skovdal, M., Campbell, C., Nyamukapa, C. & Gregson, S. (2011). When masculinity interferes with women's treatment of HIV infection: a qualitative study about adherence to antiretroviral therapy in Zimbabwe. Journal of the International Acquired Immune Deficiency Syndrome Society
13. Smith, J. A., Braunack-Mayer, A. & Wittert, G. (2006). What do we know about men's help seeking and health service use? Medical Journal of Australia
14. Stagier T., Stiawa M., Kilina R. et al (2020). Masculinity and Help-Seeking Among Men With Depression: A Qualitative Study
15. Syzdek M. R. (2010). Adherence to Masculine Norms and Attributional Processes Predict Depressive Symptoms in Recently Unemployed Men
16. Vandello. J.A., Hettinger, V.E., Bosson, J.K. & Siddiqi, J. (2013). When Equal Isn't Really Equal: The Masculine Dilemma of Seeking Work Flexibility. Journal of Social Issues, 69 (2)

2024